Azg
Ազգ
23 ԱՊՐԻԼ 2011 ՇԱԲԱԹ 73(4692)
ISSN: 1829-1651

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հրաշալի հարություն

Ցեղասպանությունից վերադարձողների վկայությունները վավերագրող գիտնական Վերժինե Սվազլյանի՝ խմբագրությանս հասցեագրած գրությունից տեղեկանում ենք, որ 96 տարի առաջ, 1915 թվականի ապրիլի 24-ին (հին տոմարով՝ ապրիլի 11) նույնպես Սուրբ Զատիկ է եղել: Եթե ճիշտ է այս տեղեկությունը, ապա դա ուժեղացնում է պնդումները, որ նախախնամական ինչ-որ բան կա Քրիստոսի ապրած Չարչարանաց շաբաթի ու հայ ժողովրդի կրած Գողգոթայի միջեւ, ու, միաժամանակ Քրիստոսի հրաշափառ Հարության եւ հայության հրաշալի հարության միջեւ:

Օսար ցեղասպանագետներից ոմանք Հայոց ցեղասպանությունը բնորոշել են որպես «տիպական» (typical), շեշտելու համար դրա նախածրագրված, ծրագրված եւ պետականորեն գործադրված լինելու փաստը: Պատմաբաններից շատերը ճշմարտապես ապացուցում են, որ օսմանյան եւ այնուհետեւ ֆեմալական Թուրքիայի կառավարությունների հանցավոր ծրագիրն ուղղված էր եւ ընդգրկում էր ողջ հայությանը՝ Արեւմտյան Հայաստանից, Կիլիկիայից, Օսմանյան կայսրության այլ վայրերից մինչեւ Արեւելյան Հայաստան եւ հին ու նոր տարբեր գաղթավայրեր անգամ:

Հետեւաբար՝ ծագում է կարեւորագույն հարցը՝ ինչպե՞ս բացատրել այսօր շուրջ 10 միլիոն հայության գոյության փաստն աշխարհում: Մանավանդ՝ ինչպե՞ս բացատրել հենց Թուրքիայի Հանրապետության տարածքում ազգային իր արմատները վերագտնող՝ ուծացած ու թուրքացած հարյուր հազարավոր հայերի գոյությունը, արթնացումը:

Անշուշտ, առաջին հերթին՝ օսմանյան եւ այնուհետեւ ֆեմալական կառավարությունները, որոնք էլ կազմակերպված, չունեին կարողականությունը իրենց ծրագրած ու կազմակերպած հանցագործությունը ամբողջականորեն իրականացնելու: Երկրորդ՝ հայկական մազապուրծ խլյակներին ու որբերին պատսպարեցին, այս կամ այն կերպ, արաբներ, որոշ քուրդեր, դաշնակից զորքերի միավորներ, անգամ՝ որոշ թուրքեր, ինչը ոճրագործները չէին կարող բացառել: Երրորդ՝ հայերն իրենք, այնտեղ՝ որտեղ խելամտություն ու խիզախություն ունեցան, դա լինի Վանում, Շաբին Գարահիսարում, Մուսա լեռան վրա, Սարդարապատում, Բաշ-Ապարանում, Ղարաֆիլիսայում, Զավախքում, Արցախում, Այնթապում, Հաճընում, Տյորթ Յոլում թե այլուր, ինքնապաշտպանվեցին եւ փրկեցին իրենց շատից գոնե քչերին, փրկվեցին ու վերապրեցին:

Այսուհանդերձ, Մեծ եղեռնից 96 տարի հետո, խորաչափելով թուրքերի դժխեմ ծրագրի ահավորությունը, հրաշք է թվում, որ կոտորակված մեր ժողովուրդը, ավելի ճիշտ՝ նրա մնացորդացը մնա՛ց, ապրե՛ց ու «դեռ շատացավ»: Ավելին՝ վերապրեց ու «քանսից» ծնունդ տվեց հայկական նոր պետականությանը, երկիր կառուցեց, բանակ ու զորք կազմեց, տնտեսություն, կրթություն, գիտություն ու մշակույթ ստեղծեց ու վերստեղծեց: Եվ այսօր, դարձյալ իր իրավունքներին տեր է կանգնել, հայկական պետության սահմանների երկայնքին՝ ներառյալ Արցախը, ինչպես նաեւ աշխարհի տարբեր մայրաքաղաքներում, եւ հաշիվ է պահանջում թուրքերից:

Իսկապես, հրաշք է:

Ինչպես հրաշք էր Քրիստոսի Հարությունը:

Ուրեմն խոնարհվենք մեր ժողովրդի հրաշալի Հարության առաջ:

Ուրեմն, միաժամանակ, օրհնենք Քրիստոսի հրաշափառ Հարությունը:

«Ինչո՞ւ այդքան դաժան գտնվեցին մեր հանդեպ»

Հարցնում են ցեղասպանության ականատես-վկաները

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հունվարի 1-ի տվյալներով՝ Հայաստանում բնակվում է 1915 թ. Օսմանյան Թուրքիայի իրականացրած Հայոց ցեղասպանությունը վերապրած 141 անձ՝ 109 կին, 32 տղամարդ: Նրանք 1915-ի ցեղասպանության, մարդկային դաժանության ու ատելության լուռ վկաներն են: Այսօր նրանք սպասում են արդարության հաստատման, որը ուշանում է: Ուշանում, որովհետեւ միջազգային հանրությունը տնտեսական շահը, ռազմական ու քաղաքական գործարքները վեր է դասում պատմական արդարությունից եւ արհամարհում ցավն ու տառապանքը:

103-ամյա **Մարի Վարդանյանը** ծնվել է Մալաթիա քաղաքում: «Այսօր էլ կարող եմ փակ աչքերով մեր տունը գտնել: Մեր տան վերեւում ու ներքեւում տնվորներ կային, դիմացը գեղեցիկ այգի կար, վարդեր, ծաղիկներ: Հիմա էլ որ գնամ՝ կգտնեմ տունը», պատմում է նա:

Հիշում է, որ խնջույքի ժամանակ թուրքերը դավադրաբար սպանել են պապին՝ Գեւորգ Մազմանյանին:

«Պապս 5 զավակ է ունեցել՝ 3 աղջիկ, 2 տղա, նրանք չկան, բոլորին թուրքերը սպանեցին, այրեցին: Մեր ունեցվածքը գողացան: Մորս էլ ճանապարհին սպանեցին: Ես ու տատիկս հայտնվեցինք որբանոցում: Էլ բան չեմ հիշում», հեկեկալով պատմում է տիկին Մարին ու պարբերաբար կրկնում. «Ես չէի սիրում թուրքերին, ատում էի նրանց»:

107-ամյա **Սիմա Անտոնյանը** նախ կորցրեց եղբորը, հետո մորը: 7 զավակներից միայն նա ողջ մնաց: Տիկին Սիմայի հիշողության մեջ դրոշմվել է այն պահը, երբ թուրքերը 6 թոռներին դրել են տատի ծնկների վրա ու սպանել: «Թուրքերն ասում էին՝ բաջի՛, քեզ ոչ մի բան չենք անի, թոռներիդ ենք սպանելու: Տատս մղկտում էր, աղաչում, որ իրեն սպանեն, բայց թուրքերը միայն ծիծաղում էին»:

Տիկին Սիման հիշում է, որ թաքնվել է ձորում: Թե ինչպես է հայտնվել Հայաստանում, չի հիշում:

Ցեղասպանության ականատես-վկան 7 զավակ, 18 թոռ ու ծոռներ ունի: Նրանց բոլորի դաստիարակության հիմքում բարությունն է: Տիկին Սիման առավոտը սկսում է աղոթքով, թոռներին էլ ինքն է սովորեցրել «Հայր մերը»: Տիկին Սիման հավատում է, որ աշխարհը կփրկեն միայն բարությունն ու սերը, սակայն թուրքերին ներել չի կարողանում:

Անհնար է **Եղրաֆիա Գեւորգյանի** արտաքինից ու եռանդից գուշակել, որ նա 105 տարեկան է: Այս տարիքում էլ սիրում է գիրք կարդալ: Նախընտրում է Թումանյանի ստեղծագործությունները: Ասում է՝ «Էնտեղ բարությունը շատ է»:

Տես էջ 2

Ապրիլի 24-ի երկակի խորհուրդը

Այս տարի Սուրբ Զատկի ու Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակման օրերը համընկել են: Զատիկը եկեղեցական շարժական տոներից է, որի հաշվարկը կապված է գարնանային գիշերահավասարի օրվան: Ապրիլի 11-ի համարում **«Ազգը»** հանգամանալից գրել էր, թե ինչու են այս օրերն համընկել:

Հիշեցնենք, որ ամսի 24-ի առավոտյան Վեհափառ հայրապետը լինելու է Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում, որտեղ կատարելու է հոգեհանգստի արարողություն: Այնուհետեւ Գարեգին Երկրորդն ու սրբազան հայրերը կվերադառնան էջմիածին, որտեղ հայրապետական պատարագը կմատուցվի 11.30-ին:

Քանի որ Սուրբ Հարության տոնի օրն համընկել է անմեղ զոհերի հիշատակման օրվան, մարդկանց մեջ անհանգստություն է առաջացել, թե ի՞նչ ձեւով են նշելու Ս. Զատիկը, ինչպե՞ս են շնորհավորելու միմյանց: Մայր աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քահանա Մելիքյանը **«Ազգի»** հետ զրույցի ժամանակ տեղեկացրեց, որ հավատացյալներն առանց որեւէ անհանգստության կարող են շնորհավորել միմյանց «Քրիստոս հարյավ ի մեռելոց» ավետիսով եւ «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի» պատասխանով: Տեր Վահրամը հավելում է. «Ինչպես ամեն տարի, այս տարի նույնպես հավատացյալները կարող են ձու ներկել»:

Ի. Պ.

ՀՀԿ եւ ՌՀՄ հայտարարությունը

Երեկ հայտարարությամբ են հանդես եկել Համաշխարհային հայկական կոնգրեսն ու Ռուսաստանի հայերի միությունը՝ պատասխանելով լրատվամիջոցներից մեկում տեղ գտած տեղեկությանը, թե իբր «Ռուսաստանի հայերի միության տեղական բաժանմունքների որոշմամբ արգելվել են Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ Կրասնոդարի երկրամասում իրականացվելիք միջոցառումները»:

ՀՀԿ եւ ՌՀՄ հայտարարությունում մասնավորապես նշված է. «Համաշխարհային հայկական կոնգրեսն ու Ռուսաստանի հայերի միությունը պաշտոնապես տեղեկացնում են, որ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված ամենամյա միջոցառումները չեն «արգելվել» եւ չէին էլ կարող «արգելվել» ՌՀՄ կենտրոնական ղեկավարության կողմից: Դրանք ավանդաբար անցկացվել եւ անցկացվելու են ՌՀՄ բոլոր մասնաճյուղերի նախաձեռնությամբ ՌԴ ամբողջ տարածքում: Մասնավորապես Մոսկվայում ապրիլի 23-ին, Թուրքիայի դեսպանատան մոտ տեղի կունենա բողոքի ակցիա, նույն օրն ավելի ուշ՝ հանրահավաք: Ապրիլի 24-ին ծաղկեպսակ կդնեն Ցեղասպանության զոհերի հիշատակի խաչքարին, իսկ հայկական եկեղեցում կմատուցվի սուրբ պատարագ՝ Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին:

Ռուսաստանի հայերի միությունը անընդունելի է համարում նման ապատեղեկատվության տարածումը եւ գտնում է, որ նման ձեւակերպումները սադրիչ են եւ վիրավորում են ազգային արժանապատվությունը»:

Հ. Ա.

Ապրիլի 24-ին նախագահ Օբաման գուցե չարտասանի «ցեղասպանություն» բառը

Սակայն Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը անդառնալի է նաեւ ԱՄՆ-ում

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Ամեն տարի ապրիլի 24-ին բոլորն անհամբեր սպասում են ԱՄՆ նախագահի ելույթին: Սպասելու պարագայում խնդիրը սոսկ Հայաստանը կամ Սփյուռքը չեն, ոչ էլ ելույթի նկատմամբ հետաքրքրություններն են սահմանափակվում Թուրքիայով: Պարզապես հայերը մտավախություն են ունենում, թե նախագահը չի արտասանի «ցեղասպանություն» բառը, իսկ թուրքերը տագնապ են ապրում, ելնելով այդ բառի արտասանման հավանականությունից:

Թեեւ այս տարի արաբական երկրներում բռնկված հակակառավարական խռովությունները, հայտնվելով միջազգային հանրության օրակարգում, երկրորդ պլան են մղել Հայոց ցեղասպանության հարցը, այդ իսկ պատճառով էլ Թուրքիան, ի տարբերություն նախորդ տարիների, համեմատաբար հանգիստ է, սակայն դա ամենեւին էլ չի ենթադրում թուրքերի ապրիլի 24-ի տագնապի վերացումը:

Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ CNN-turk-ին, ահա թե ապրիլի 21-ին կայքէջում ինչ է գրել այս հեռուստատեսությունը. «Մոտենում է ապրիլի 24-ը... Բոլորի հայացքն ուղղված է դեպի ԱՄՆ նախագահ Բարաք Օբամային: Ուշադրության կենտրոնում ցեղասպանության հայկական պնդումների առնչությամբ նրա ելույթն է: Թուրքիան շարունակում է շփումները ԱՄՆ-ի գերատեսչությունների հետ: Արտգործնախարարության խոսնակ Սելչուք Ունալը, նկատի ունենալով Օբամային, ասաց. «Հույս ունենք, որ անկողմնակալ եւ արդար մոտեցում կդրսեւորի»:

Արտգործնախարարությունում կազմակերպված մամուլի ասուլիսում Ունալը 1915-ի իրադարձություններին եւ ապրիլի 24-ին առնչվող հարցերին ի պատասխան նշեց, որ իրենք այդ ուղղությամբ, ինչպես ԱՄՆ-ի վարչակարգի, այնպես էլ նախագահ Բարաք Օբամայի հետ աշխատում են սերտ համագործակցությամբ, ավելացնելով. «Մենք մեր գործընկերներին ամեն անգամ հասկացնում ենք, որ քաղաքական, իրավական եւ բարոյական առումով խնդրահարույց է լինելու ԱՄՆ-ի գերատեսչությունների վճիռը միջազգային այն տարածայնության շուրջը, որն ընդգրկում է պատմական վիճելի մի ժամանակահատված»:

Այնուամենայնիվ բաց է մնում՝ «ապրիլի 24-ի ելույթում Օբաման կարտասանի՞ «ցեղասպանություն» բառը, թե՞ ոչ» հարցը: Այդ մասին դժվար է կարծիք հայտնելը, սակայն կարելի է ենթադրել, որ՝ ոչ: Դրա համար հիմք է ծառայում ոչ այնքան թուրք խոսնակի այսպես կոչված լավատեսությունը, այլ արաբական աշխարհում տեղի ունեցող քաղաքական զարգացումները, որոնք թեկուզ մասնակի, սպառնալիքի տակ են դնում ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության շարունակականությունը:

Անցյալ տարի այս օրերին Անկարան ԱՄՆ էր գործուղել Թուրքիայի Ազգային մեծ ժողովի երկու պատվիրակություններ, որոնք Վաշինգտոնում եւ Նյու Յորքում բացատրական աշխատանքներ էին տանում: Եթե Հայոց ցեղասպանության հարցը չմնար տարածաշրջանային զարգացումների սվերում, կասկածից վեր է, որ Թուրքիան պատվիրակություն կուղարկեր նաեւ այս տարի:

Տես էջ 2

ԱԶԳ

Ընթացիկ

«Թուրքիան ներսից փոխելու մեր առիթը վերջացավ 1915-ին»

Արամ Համբարյանի կարծիքով՝ Հայաստանի համար արդեն ժամանակն է հետ կանչելու ստորագրությունը հայ-թուրքական արշանագրություններից

ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի ադրիլխանչորյան ուղերձում «ցեղասպանություն» բառն օգտագործված տեսնելու առանձնակի հույսեր ոչ մեկն էլ կարծես չունի: Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն **Արամ Համբարյանը** հայասանյան մի քանի լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հանդիպմանը հիշեցրեց, որ անցյալ երկու տարին Օբաման հայկական համայնքի տված իր խոստումը չպահեց ու չօգտագործեց «ցեղասպանություն» բառը: «Այս տարի դեռեւս ազդանշաններ չկան, թե պատրաստ է փոխել նախորդ տարիների վիճակը, բայց պիտի սպասենք»:

Նրա խոսքերով, պատճառներից մեկը վերաբերում է հայ-թուրքական արձանագրություններին: Ըստ այդմ, ակնհայտ է, որ հայ-թուրքական արձանագրություններն օգնեցին Թուրքիային, այսինքն, սառեցվեց ցեղասպանության՝ այլ երկրների կողմից ճանաչման գործընթացը: Հայ-թուրքական արձանագրությունները, ըստ Համբարյանի, հնարավորություն տվեցին նաեւ Սպիտակ տանը, որ պատճառ լինի տված խոստումը չպահելու: «Հայերը այստեղ եւ Հայաստանում բան չստացան այդ արձանագրություններից: Եվ հիմա ժամանակն է, որ Հայաստանը հետ կանչի իր ստորագրությունը: Դրա դեմ Թուրքիան կարող է բողոքել, բայց ամերիկացիներն էլ կհասկանան, որ թուրքերն իրենց խաբեցին՝ երկու տարի ձգձգելով արձանագրությունների հարցը»:

Ապրիլի 24-ի կապակցությամբ բողոքի ակցիաներ ԱՄՆ-ում իրականացնում են ոչ միայն հայերը, այլեւ թուրքերը: Արամ Համբարյանի գնահատմամբ, «Ամերիկայի թուրքական գաղութից առանձնակի շատ գործ չեմ տեսել, բայց թուրքական կառավարությունն է շատ գործ անում ու նրա լոբբիստները, ու արվածն էլ մատուցվում է Ամերիկայի թուրքերի անունից, որպեսզի ամերիկացիները չգնահատեն այդ ամենը որպես քայլեր դրսից»: Այդ ամենը, ըստ Համբարյանի, Անկարայից է գալիս:

«Ամերիկայի թուրքական գաղութը մեծ ուժեր չի ներկայացնում այն դեպքում, երբ հայկականը երեք-չորս սերունդ այս երկրում է, եւ դերակատարություն ունի այս հասարակության ու երկրի մեջ, ինչն էլ հասկանալի է կառավարության համար: Բայց, միեւնույն ժամանակ, մեր կառավարությունը վախենում է Թուրքիայի արձագանքից: Թուրքական գաղութը դեռ չի հասել մեծ ուժ ունենալուն, իրական ուժն Անկարան է», վստահեցնում է Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրենը: Թուրքական լոբբին բավականին ուժեղ է, միլիոնավոր դոլարներ են ծախսվում լոբբիստական գործունեության վրա, որոնք դեռեւս էլ Թուրքիայի հետ բիզնես շահեր ունեցողներն են ազդեցություն բանեցնում: Իսկ այդ ամենի երեւացող մասն, ըստ Համբարյանի, ԱՄՆ թուրքական համայնքն է: Այս համայնքը մեծանում ու աճում է՝ նաեւ մեծ միջոցների տիրապետելով:

«Ամեն դեպքում, մենք պետք է շարունակենք աշխատել ցեղասպանության ճանաչման ուղղությամբ, մենք երկար ճանապարհ ենք անցել, ավելի քան քառասուն նահանգներ ճանաչել են ցեղասպանությունը, հիմա տարբեր համալսարաններ, մեծ թերթեր եւս ճանաչում են այդ փաստը», հավաստիացնում է Արամ Համբարյանը: Նրա խոսքերով, «Ամեն ուղղությամբ առաջ ենք գնում, բայց Սպիտակ տան առնչությամբ դեռեւս չենք հասել այնտեղ, ուր ցանկանում ենք: Օբաման երկու տարի անց էլ չի կատարում իր խոստումը, բայց մենք պետք է հրապարակենք դրան հասնելու համար»:

Թե ինչ կլինի հաջորդ տարիներին, Համբարյանը մեկնաբանություն չի անում. «Աղագայում «ցեղասպանություն» բառը նախագահի կողմից օգտագործվելու առումով չեն կարող ոչինչ ասել, բայց Օբամայի օգնականների համար սա լուրջ խնդիր է, ցանկալի չէ, որ մնա նախագահի կողմից իր խոստումը չկատարելու իրավիճակը»: Բացի դրանից, ամերիկահայ գաղութն ուժ ունի Միացյալ Նահանգներում, եւ երբ էլ արտասանի ԱՄՆ նախագահը «ցեղասպանություն» բառը, հայերը պատմության ճիշտ կողմում են: «Պիտի պայքարենք, միայն ոչ թե ճշմարտության, այլ՝ արդարության համար: Հայոց ցեղասպանությունը ոճիր է, որ պետք է ճիշտ եւ արդար ձեւով լուծենք: Սա կոնֆլիկտ չէ, այլ ոճիր», հաստատում է Արամ Համբարյանը:

Երբ թուրքական կառավարությունն առաջարկեց արձանագրությունները, Թուրքիայի ուզածն, ըստ Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրենի, այն էր, որ աշխարհին ասի, թե ցեղասպանության հարցը կոնֆլիկտ է, ու թող երկու երկրները լուծեն այդ տարբերությունը: «Բայց այդ երկու երկրները հավասար չեն ուժով, ու երբ հանում ես այս խնդիրը բարոյական դաշտից, դառնում է քաղաքական, որի պարագայում Թուրքիան շատ ուժ ունի»:

ԱՄՆ նախագահի վերջերս արած հայտարարությունը, թե մասնակցելու է հաջորդ ընտրություններին, որեւէ արձագանք դեռեւս չունի հայ համայնքի կողմից: «Դեռ վաղ է որոշել, թե ինչ կլինի այս ընտրություններում: Բայց կան մի շարք խնդիրներ. ցեղասպանության ճանաչումը, նաեւ հայ-թուրքական արձանագրություններում ԱՄՆ դերակատարությունը, Ղարաբաղի հարցը, որի առնչությամբ էլ խոստումներ էին տրվել»: Բայց հետո, ըստ Համբարյանի, Բարաքը ուղարկվեց Մեթյու Բրայզան, որը չի պաշտպանում Օբամայի տված խոստման սկզբունքները: Նաեւ կրճատվեց Ղարաբաղին հատկացվող օգնությունը:

«Այսօր ամերիկյան կառավարությունը խոսում է Ադրբեջանին արբանյակ ունենալու հարցում օժանդակելու մասին, բայց, ասված չանի, պատերազմ լինելու դեպքում այդ զենքը կարող է օգտագործվել Հայաստանի կամ Ղարաբաղի դեմ: Այլ շատ խնդիրներ էլ կան: ԱՄՆ նախագահը մի շարք հարցերում չի արել այն, ինչ խոստացել էր: Սա է այսօրվա վիճակը, բայց դեռ որեւէ որոշում չկա»:

Անդրադառնալով Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Բրայզայի՝ քաղավիացիայի ինքնաթիռները ռմբակոծելու ադրբեջանական հայտարարությունն անընդունելի որակելուն, նաեւ վերջերս Նախիջեւան այցելելիս Զուղա մտնելու դեմ ադրբեջանական արգելքին, Համբարյանը նշում է, որ ինքնաթիռների ռմբակոծման ահաբեկչական հայտարարությանն անընդունելի որակումը թույլ արձագանք էր: «Եղածը պետք է խստորեն դատապարտվեր ու պահանջվեր հրադադարային ներողություն Ալիեւից»:

Ինչ վերաբերում է Նախիջեւան եւ մասնավորապես Զուղա այցելությանը, ապա, Համբարյանի տեղեկացմամբ, Բրայզան դա անելու խոստում տվել է ոչ թե ամերիկահայ համայքնին, այլ ԱՄՆ սենատորներին: «Բրայզան պարտավորություն էր ստանձնել այցելելու Զուղայի գերեզմանատունը, նա պետք է դա աներ: Իսկ դա անելու հարցում Ադրբեջանի մերժումը որեւէ բացատրություն չի ստացել: Որպես ամերիկացիներ մենք բացատրություն ենք ակնկալում մեր դեսպանից, բացի դրանից, նաեւ իր ստանձնած պարտավորության կատարում՝ գնալու եւ տեսնելու: Մեզ համար անընդունելի է, որ ԱՄՆ դեսպանին մերժում են իր դեսպանության երկրում որեւէ տեղ այցելել»:

Թուրքիայի ներսում խաներորդ դարասկզբի ողբերգության հիշատակի քայլերի առնչությամբ էլ Համբարյանն իր մոտեցումն ունի. «Թուրքիան ներսից փոխելու մեր առիթը վերջացավ 1915-ին»: Թուրքիան պետք է փոխվի ներսից, մինչդեռ Թուրքիայի հայ համայնքը չի կարողանում բաց խոսել: «Եթե որոշ անհատներ կամ խմբեր Թուրքիայում սկսել են հասկանալ արդարությունը, դա գնահատելի է, բայց եթե դրսի ճնշումը չլիներ, այդ շարժումները չէին լինի», եզրակացնում է Արամ Համբարյանը:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վաշինգտոն

«Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ եւ հեռանկարներ»

Ազգային ժողովում երեկ տեղի ունեցավ «Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ եւ հեռանկարներ» գրքի շնորհանդեսը: ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Ռուստամյանը տեղեկացրեց, որ ժողովածուն 2007 թ. դեկտեմբերի 19-20-ը ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ կայացած խորհրդարանական լսումների սղագրությունների ամփոփումն է եւ ներառում է լսումների ընթացքում հնչած զեկուցումները, ելույթները, հարց ու պատասխանները եւ հիմնահարցին առնչվող կարեւոր փաստաթղթեր: Գրքի տպագրությունն իրականացվել է շնորհիվ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի, Եվրասիա-համագործակցություն հիմնադրամի, Շվեդիայի Միջազգային զարգացման եւ համագործակցության գործակալության: Քարտեզները տրամադրել է պատմաբան Բաբկեն Հարությունյանը: Ըստ Ա. Ռուստամյանի՝ ժողովածուն նախատեսված է հիմնախնդրով մտահոգ պետական եւ հասարակական կառույցների, մասնագետների, հանրության լայն խավերի համար եւ օգտակար կարող է լինել խորհրդարանական դիվանագիտության զարգացման առումով: Այս կարգի մի ժողովածու էլ լույս էր տեսել ԼՂ հիմնախնդրի վերաբերյալ, էլի խորհրդարանական լսումներից հետո: Մ. Խ.

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ՀԱՐՑԸ

«Ինչո՞ւ այդքան դաժան գտնվեցին մեր հանդեպ»

1-ին էջից

«Հիշում եմ, որ ձորում էինք թաքնվել, փախնում էինք, հենց ձայն էինք լսում, թաքնվում էինք: Վախից դողացնում էինք, լուռ լացում, որ թուրքերը մեր ձայնը չլսեին: Եկանք հասանք Արազ: Ջուրը ամբողջությամբ կարմիր էր, հայի արյունն էր դա», հիշում է նա: Եղրախիա տատիկը 9 տարեկան էր, երբ գաղթեցին Կարսի Մառվակ գյուղից: Գաղթի ճանապարհին կորցրել է մորն ու եղբորը: Գյումրիում կորցրել քեռուն ու հայտնվել Գյումրիի մանկատանը:

1909թ. ծնված Ալիս Կասրյանն այսօր ապրում է Արմավիրի մարզի Նոր Պատ գյուղում: 102-ամյա կինը պատմում է, որ հորը՝ Հակոբ Բերբերյանին սպանել են, երբ ինքը 6 ամսական էր: Մաշկազերծ են արել վարդապետ հորեղբորը: Ալիսը հարազատների հետ փախել է Հունաստան՝ տատի մոտ:

Կարճ ժամանակ անց հիվանդությունից մահանում է նաեւ մայրը: Մորը Ալիսը չի հիշում. տպավորվել է միայն նրա անունը՝ Զարուհի: Հունաստանում Ալիսն ապրել է քեռու տանը, մեկ սենյակում 11-հոգանոց ընտանիքն էր ապրում:

«Ինձ դաժան ճակատագիր բաժին ընկավ: Ամուսինս հայրենական պատերազմի ժամանակ մահացավ: 1947-ին որպես հայրենադարձ վերադարձա ու հաստատվեցի Հայաստանում», պատմում է նա:

Արաքս գյուղում է ապրում Գյուլե Հովհաննիսյանը: Նրա ծնողներն ապրել են Բիթլիսի Խանըկ գյուղում: Տիկին Գյուլեի պապը գյուղի քահանան էր: «Թուրքերը հայերի ձեռքից զենքերը հավաքում էին: Պապիկս, որ ուսյալ անձնավորություն էր, անհանգստացել է, հասկացել, որ հայերին վտանգ է սպառնում: Կարճ ժամանակ անց նրան ձերբակալեցին: Պապիս ասացին, որ կրոնը փոխի ու մահմեդականություն ընդունի, բայց հրաժարվեց: Նրան գցել են մի փոքր սենյակ, տանջել թեւերը կոտրել, սակայն նա հրաժարվել է ընդունել մահմեդականություն», հիշում է տիկին Գյուլեն: Նա ծնողների եւ եղբոր հետ փախել է Սիրիա:

Տիկին Գյուլեն Հայաստան է եկել 1947-ին: Ասում է՝ Սիրիայում սարսափելի կյանքով են ապրել: «Մայրս շուտ մահացավ: Աղքատություն էր, սով: Հինգ տարի մեզ ֆրանսիացիները պահել են: Հետո մի կերպ նավով եկանք Բաթում, այնտեղից էլ Հայաստան: Այս տարիքում էլ ինքս ինձ հարց եմ տալիս, իսկ ո՞րն էր մեր մեղքը, ինչո՞ւ մեզ այդպես պատժեցին, ինչո՞ւ այդքան դաժան գտնվեցին մեր հանդեպ: Որ հա՛յ էինք: Մի՞թե հայ լինելը մեղք է: Մի՞թե քրիստոնյա լինելը անեծք է», հարցնում է տիկին Գյուլեն ու անկեղծորեն զարմանում, որ աշխարհը գիտի իրենց տառապանքների ու զրկանքների մասին, սակայն մեղավորին չի պատժում:

Կալիֆոռնիայում Օբամայից պահանջեցին «հարգել խոստումը»

Ապրիլի 21-ին, երբ Լոս Անջելեսի մեծաքակ քաղվր քաղաքի «Սոնի» կինոհամալիրում նախագահ Օբամայի մասնակցությամբ մեկնարկեց վերջինիս վերընտրման քարոզարշավի դրամահավաքը, 1500 լոսանջելեսահայեր բողոքի ցույց արեցին հենց կինոհամալիրի դիմաց: «Օբամա, հարգիր խոստումդ» կարգախոսով հայերին միացել էր նաեւ System of a Down խմբի հանրահայտ երգիչ Սերժ Թանգյանը: Ինչպես տեղեկանում ենք ՀՅԴ Արեւմտյան Ամերիկայի կենտրոնական կոմիտեի հանրային կապերի գրասենյակից, բողոքի ցույցին մասնակցել են նաեւ վերջինի անդամ Հովան Թաշճյանը, Արեւմտյան Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի ատենապետ Անդրանիկ Քիզիրյանը եւ այլք: Նույն աղբյուրից տեղեկանում ենք նաեւ, որ ցույցին ներկա են եղել մի շարք ամերիկյան լրատվամիջոցների ներկայացուցիչներ, եւ նույն օրը տեղական հեռուստաընկերությունները լայնորեն անդրադարձել են ամերիկահայերի բողոքին:

Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցի հիշատակման միջոցառումները շարունակվում են Լոս Անջելեսի վարչական շրջանի հայաշատ քաղաքներում: Ապրիլի 24-ին բողոքի համահամայնքային ցույց տեղի կունենա Լոս Անջելեսում Թուրքիայի հյուպատոսարանի առջեւ: Հ. Ա.

Ապրիլի 24-ին նախագահ Օբաման գուցե չարտասանի «ցեղասպանություն» բառը

1-ին էջից

Եթե ապրիլի 24-ի ելույթում նախագահ Օբաման արտասանի «ցեղասպանություն» բառը, ինչ խոսք, դրանով զգալի կդյուրացնի Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի անցկացումը ԱՄՆ Կոնգրեսում: Չպետք է սակայն մոռանալ, որ ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը ոչ միայն սպառել է թուրքական ժխտողականության դիրքերը, այլեւ անդառնալի է դարձրել գործընթացի հետագա ծավալումը նաեւ ԱՄՆ-ում: Հետեւաբար ելույթում «ցեղասպանություն» բառի օգտագործումից Օբամայի խուսափելը ընդամենը ժամանակավոր ձախողում կլինի: Այլ կերպ՝ դրանով թեեւ կհետաձգվի ցեղասպանության ճանաչումը, սակայն ճանաչման հարցը, անկախ նախագահի ելույթի բովանդակությունից, կպահպանվի ԱՄՆ-ի օրակարգում:

Այս հանգամանքը հնարավոր ձախողմանը հակազդելու դրսեւորումների առումով Հայաստանի, Սփյուռքի, առավել եւս Ամերիայի հայերի համար ենթադրում է հավասարակշռություն եւ այդ դրսեւորումների չափավորում քաղաքական էթիկայի շրջանակներում: Ի վերջո, Հայոց ցեղասպանության ճանաչումը համահայկական խնդիր է, իսկ ազգային խնդիրներում ժամանակավոր ձախողումները պետք է արժանապատվությամբ դիմավորել, քաջ գիտակցելով, որ սանձարձակությունները չեն նպաստի դրանց լուծմանը: Չպետք է նաեւ մոռանալ, որ պետությունները եւ պետական գործիչները, ճանաչելով Հայոց ցեղասպանությունը, ընդամենը մարդկության դեմ կատարված հանցագործությունն են դատապարտում, ընդ որում ելնելով այն ստորագրությունից, որը դրել են ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիայի եւ դրա կատարելագործված տարբերակի տակ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ եղիշնակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Երեւանի տրանսպորտի հավերժական խնդիրները

Երեւանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը երեկ հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ անդրադարձավ հասարակական տրանսպորտի ոլորտում իրականացրած մոնիտորինգի արդյունքներին եւ պատասխանեց լրագրողների բազմաթիվ հարցերին:

Ինչպես հայտնեց վարչության պետը, մոնիտորինգի ժամանակ ուսումնասիրվել են ավտոբուսների եւ միկրոավտոբուսների արտաքին մաքրությունը, վարորդների արտաքին տեսքը, ամրագոտիներից օգտվելը եւ երթուղիներ դուրս գալու ժամանակային միջակայքը: Պարզվել է, որ որոշ երթուղիներ չեն բավարարել անհրաժեշտ թվով շարժակազմով, ինչը նրանց պայմանագրային պարտավորվածություններից է: Խոսքը թ.14,16, 32, 43 ավտոբուսային եւ 53, 69, 93, 110, 102, 109, 118, 112 միկրոավտոբուսային երթուղիների մասին է: Հենրիկ Նավասարդյանը հայտնեց նաեւ, որ շարժակազմի երթուղի դուրս գալու ժամանակային միջակայքը շաս երթուղիներում երկար է եղել, սահմանված 5-6 րոպեից ավելի, որը երեկոյան հասնում է 8-10 րոպեի: Ի դեպ, տրանսպորտի վարչության պետին հիշեցրինք, որ հատկապես ձմռանը, երեկոյան ժամը 19-ից հետո շաս երթուղիներում ընդհանրապես աշխատող միկրոավտոբուս կամ ավտոբուս չի լինում:

Իր խոսքում տրանսպորտի վարչության պետը կրկին անդրադարձավ քաղաքապետի հրահանգին, որ առնվազն 1 օր քաղաքապետարանի եւ վարչական շրջանների ղեկավարներն ու աշխատակիցները իրենց ծառայողական կամ սեփական մեքենաների փոխարեն տրանսպորտով գան աշխատանքի, որպեսզի տեսնեն եւ ամբողջացնեն լուծման կարիք ունեցող խնդիրները: Ինքը՝ Հենրիկ Նավասարդյանը հայտնեց, որ հաճախ է օգտվում հասարակական տրանսպորտից, նաեւ անձնապես խնդիրները տեսնելու համար: Տրանսպորտի վարչության պետը լրագրողներին տեղեկացրեց, որ ինքը էջ է բացել «Ֆեյսբուքում», եւ առաջարկեց կոնկրետ դժգոհությունների եւ բողոքների մասին դիմել իրեն henrik.navasardyan@yandex.ru հասցեով:

«Ազգի» հարցն՝ ուղղված տրանսպորտի վարչության պետին, Երեւանի հասարակական տրանսպորտի գլխավոր խնդրին՝ գերբեռնվածությանն ու դրա լուծման ուղիներին էր վերաբերում: «Կոնկրետ ի՞նչ է արվելու այս տարի գերբեռնվածության խնդրի լուծման համար, եւ քանի՞ ավտոբուս է բերվելու փոխարինելու համար միկրոավտոբուսներին» հարցին Հենրիկ Նավասարդյանը պատասխանեց, որ այս տարի նախատեսվում է 80-100 ավտոբուս բերել Չինաստանից՝ որպես վարկային օժանդակություն: Չինաստանում մրցույթ կլինի եւ կընտրվի ավտոբուսներ մատակարարող ընկերությունը, որից հետո՝ օգոստոս-սեպտեմբերին այդ ավտոբուսները կբերվեն Երեւան: Բացի դրանից, միկրոավտոբուսային այն երթուղիներում, որտեղ ուղեւորահոսքը մեծ է, առաջարկվել է ներկրել ավտոբուսներ: Ընդհանուր առմամբ միկրոավտոբուսների թիվը ներկայիս 2650-ից կկրճատվի մինչեւ 1500, իսկ ավտոբուսների թիվը ներկայիս 370-ից կհասնի 800-850-ի: Միաժամանակ, սահմանվել են Հայաստան ներկրվող ավտոբուսների լայնության եւ երկարության չափանիշները՝ լայնությունը պետք է լինի առնվազն 240 սմ, երկարությունը՝ առնվազն 740 սմ:

Բնականաբար, լրագրողների բազմաթիվ հարցերն առնչվում էին մայրաքաղաքի տրանսպորտի այլ խնդիրներին՝ միկրոավտոբուսների սրահների ներքին մաքրությանն ու վիճակին, գիշերը ուղեւորավարձը 200 դրամ դարձնելուն, կանգառներում տախտակների առատությանը եւ այլն, որոնց վերաբերյալ Հենրիկ Նավասարդյանը փորձում էր որոշակի պատասխաններ տալ: Պատասխանները տրամաբանական էին, բայց վերջին 10-15 տարիներին բազում նման պատասխաններ են տրվել Երեւանի քաղաքապետերների եւ տրանսպորտի վարչության պետերի կողմից, իսկ խնդիրները շարունակել են մնալ չլուծված:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Խրախուսում են պատժելու փոխարեն»

Վերնիսաժում կատարվող փոփոխությունները եւ տարիներ շարունակ բարձիթողի վիճակն այս օրերին դարձել են շատերի քննարկման թեմա: Հիշեցնենք, որ Երեւանի քաղաքապետի որոշմամբ Վերնիսաժի կանաչ տարածքներում առեւտուր անելն արգելվել է, իսկ վաճառքի համար տրամադրված վայրերն էլ պետք է լինեն բարեկարգ: Քաղաքապետարանի նախաձեռնություններին լրագրողների հետ հանդիպման ժամանակ երեկ անդրադարձան նաեւ ճարտարապետներ **Լեւոն Իգիթյանն** ու **Սաշուր Քալաշյանը**: Վերջինս, նշեց, որ Վերնիսաժը զբոսաշրջության առումով հետաքրքրություն ներկայացնում է, սակայն պետք է տեղակայված լիներ այլ տեղում, ոչ թե կառավարության շենքերի հարեւանությամբ: Իսկ Լեւոն Իգիթյանը Վերնիսաժի ներկայիս տեղին դեմ չէ, այլ դեմ է անբարեկարգ ու թափթփված վիճակին. «Ձեզ դո՞ւր է գալիս միջավայրը, որտեղ վաճառվում են նկարներն ու հուշանվերները»:

Այնուհետեւ խոսելով Երեւանի ընդհանուր ճարտարապետական վիճակից՝ Սաշուր Քալաշյանն առաջարկեց քաղաքին նայել «զբոսաշրջիկի աչքերով». «Այդ ժամանակ կտեսնեք, թե քանի շենքից գեղագիտական հաճույք կստանք»: Ճարտարապետ Քալաշյանը մայրաքաղաքի տեսքը 3 գնահատականից էլ ցածր գնահատեց՝ «3-»: Վերջինիս կարծիքով՝ քաղաքի նման վիճակը պայմանավորված է նաեւ սոցիալ-հոգեբանական վիճակով: Իրապես, յուրաքանչյուր երկրի ճարտարապետություն արտացոլում է նաեւ այդ երկրի հոգեբանական վիճակը, կարգապահությունն ու օրինապահությունը: «Մեր բոլոր օրենքներով գրված է, որ աղտոտելի շինարարությունը պետք է պատժվի, իսկ մեզանում պատժելու փոխարեն խրախուսում են»:

Ի. Պ.

«Ամերիաբանկը» գրեթե բոլոր ցուցանիշներով գրանցել է աճ եւ կշարունակի փոքր ու միջին բիզնեսի վարկավորումը

Կորպորատիվ եւ ներդրումային «Ամերիաբանկի» 2011-ի առաջին եռամսյակի արդյունքները երեկ ամփոփեց բանկի զարգացման գծով տնօրեն **Տիգրան Զրբաշյանը**: Ընդգծելով, որ այս տարվա առաջին եռամսյակը բանկը փակել է «մի քիչ ավելի արդյունավետ», քան կանխատեսվում էր, Զրբաշյանը նշեց, որ մարտի 31-ի դրությամբ «Ամերիաբանկի» ակտիվներն աճել են 5 տոկոսով, ինչը երկրորդ ցուցանիշն է Հայաստանում: Զրբաշյանը նշեց նաեւ, որ ավելացել են բանկի հաճախորդները, որոնք ընդհանուր առմամբ շուրջ 28500 են, իրավաբանական անձ են վերոհիշյալից շուրջ 2600-ը: Խոսելով իրավաբանական անձանց նկատմամբ բանկի ունեցած պարտավորություններից՝ Զրբաշյանը նշեց, որ դրանցում նույնպես արձանագրվել է աճ՝ 44 տոկոսով, ինչը նույնպես Հայաստանում երկրորդ ցուցանիշն է: Անցած եռամսյակում իրականացրած ծրագրերից Զրբաշյանը կարեւորեց նաեւ բանկի նոր մասնաճյուղերի բացումը: Մասնավորապես «Ամերիաբանկը» նոր մասնաճյուղ բացեց մայրաքաղաքի Մաշտոցի պողոտա-Մոսկովյան խաչմերուկում, եւ նախատեսում է մասնաճյուղերի բացում, այդ թվում՝ մարզերում: Զրբաշյանի խոսքերով՝ շուտով նոր մասնաճյուղ կհիմնվի Վանաձորում: Բանկն արդեն իսկ ունի բացված 7 մասնաճյուղեր, որոնցից 4-ը Երեւանում են, մեկական՝ Լեռնային Ղարաբաղում, Քաջարանում եւ Դիլիջանում:

Աճել է նաեւ «Ամերիաբանկի» վարկային պորտֆելը: Եռամսյակի կտրվածքով (ներառյալ մարտ ամիսը) այն կազմել է 104,9 մլն, այս ցուցանիշով եւս բանկը երկրորդն է Հայաստանում: «Մեր տրամադրած վարկերը երկարաժամկետ են, բաժանված առանձին սեկտորների՝ մանր ու միջին բիզնեսի, սննդի արդյունաբերության, հանքահումքային արդյունաբերությանը, էներգետիկային եւ այլն», նշեց Զրբաշյանը: Զարգացման գծով տնօրենը շեշտեց, որ հատկապես մանր ու միջին բիզնեսի վարկավորման առումով իրենք դեռ «բավականին հավակնոտ ծրագրեր ունեն»: Կոնկրետ վարկային պորտֆելի առումով՝ Զրբաշյանը նշեց, որ ակնկալվում է տարվա վերջին ունենալ 30-40 տոկոս աճ:

Խոսելով արդեն ընթացիկ եռամսյակի ծրագրերից՝ Զրբաշյանը նշեց, որ շուտով շուկա կներմուծեն «բավական ուշագրավ նորարարություններ»: Մասնավորապես առաջիկա շաբաթ «Ամերիաբանկը» արտահանողների եւ ներմուծողների համար կներկայացնի ծրագիր, առաջիկա մայիսից՝ սփյուռքի ուղղությամբ ծրագիր: Վերջինի կապակցությամբ Զրբաշյանն ասաց, որ նախապատրաստական փուլն ավարտվում է՝ շուկաների ուսումնասիրություն եւ այլն. «Արդեն իսկ կա հստակ պատկերացում եւ գործունեության հստակ ծրագիր», տեղեկացրեց Զրբաշյանը:

Հ. Ա.

ԿՈՒՄԱԿՅԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Արմենական-ՌԱԿ գրասենյակի բացում Մարտունի քաղաքում

Ճիշտ մեկ տարի առաջ այս օրերին Մարտունի քաղաքում բացվեց Արմենական-ՌԱԿ «Մարտունի» ակումբը: Այդ առիթով կուսակցության «Երիտասարդական ակումբ»-ը խորհրդանշական 125 հաս ծառ տնկեց Մարտունի քաղաքում: Ծառատունկը իր մեջ կրում էր խորհուրդ՝ Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցին ընդառաջ «մեկուկես միլիոն ծառ տնկել» ի հիշատակ անմեղ զոհերի, եւ «Արմենական» կուսակցության 125-ամյակի:

Մարտունիում 15 նորագիր անդամներ այդ օրը ավանդական կուսակցությանն անդամակցելու երդման ուխտով՝ «Երդվում եմ խղճով ու պատվով ծառայել ազգիս ու ժողովրդիս» լրացրին Արմենական-Ռամկավար ազատական կուսակցության շարքերը:

Այդ օրը իսկ որոշվեց Մարտունի քաղաքում հիմնել կուսակցության գրասենյակ, որի կահավորման հովանավորությունը իր վրա վերցրեց ՌԱԿ փոխատենապետ, Ամերիկայի եւ Կանադայի Թեմերյան մշակութային միության կենտրոնական վարչության անդամ **Բաբկեն Մկրյանը, իր տիկնոջ՝ **Անահիտ Մկրյանի** հետ:**

Պրն Բաբկեն Մկրյանը բարեգործական տարբեր ծրագրերով, ինչպես նաեւ Հայաստանի Թեմերյան մշակութային միության ամենամյա «Վահան Թեմերյան» մրցանակաբաշխությանը մասնակցելու առիթով գտնվում էր Երեւանում եւ բնականաբար մասնակցեց գրասենյակի բացմանը:

Արմենական-ՌԱԿ «Մարտունի» ակումբին գույքն ու համակարգիչը նվիրելու առիթով ակումբում էին Արմենական-ՌԱԿ կենտրոնական վարչության անդամներ Գայանե Մուրադյանը, Սուրեն Սարգսյանը, Սուսաննա Ղազարյանը եւ Արմեն Ադամյանը: Ակումբի ատենապետ Հուսիկ Մխիթարյանը մեծ ոգեւորությամբ նշեց, որ քաղաքում կուսակցական ակումբի գրասենյակի առկայությունը հանդիպման վայր է դարձել ոչ միայն կուսակցականների, այլեւ համակիրների համար, Արմենական-ՌԱԿ Մարտունի ակումբի կուսակցության անդամ **Սարգսյան Օֆիկն էլ ավելացրեց, որ տարին նախընտրական է, եւ այս ամենում կարեւոր գործն է լինելու՝ ՌԱԿ գաղափարախոսության տարածումը:**

Այնուհետեւ բացման մասնակիցները այցելեցին տեղի մանկապարտեզ եւ խաղալիքներ նվիրեցին երեխաներին:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Շնորհավորանք

Արմենական-ՌԱԿ Հանրապետական վարչությունը ջերմորեն շնորհավորում է կուսակցության Լոռու մարզային վարչության անդամ Նելլի Գյուլզասյանին (Վանաձոր) ծննդյան 50-ամյա հոբելյանի առիթով:

«Ազգը» միանում է շնորհավորանքին:

Gallup. Բնակչության 54 տոկոսը պայքարում է գոյատեւման համար, 34 տոկոսը՝ տառապում

Gallup հետազոտական կենտրոնը աշխարհի 124 երկրում հետազոտություն է կատարել՝ պարզելու թե ինչպես են իրենց կյանքը գնահատում քաղաքացիներն ու ինչ ակնկալիքներ ունեն առաջիկա 5 տարվանից:

Պատկերը ստանալու համար յուրաքանչյուր մասնակցի մասնագետներն առաջարկել են գնահատել իր առօրյա կյանքը 10-բալանոց համակարգով:

Համաձայան հարցման արդյունքների՝ Հայաստանում բնակչության 12 տոկոսը վստահ է, որ իր կյանքը բարգավաճում է: 54 տոկոսը պայքարում է գոյատեւման համար, իսկ 34 տոկոսը՝ տառապում:

Հարցվածների 12 տոկոսը 7-ից բարձր միավորով է բնորոշել սեփական կենսամակարդակը: «Նրանք կայուն եւ բարգավաճ կյանք են վարում, դրական ակնկալիքներ ունեն ապագայից, հազվադեպ են բողոքում առողջությունից: Նրանք երջանիկ են», եզրակացնում է Gallup-ը:

Բնակչության 54 տոկոսը սեփական կենսամակարդակը գնահատել է 4-7 բալի սահմաններում: Վերոնշյալ խմբի վերաբերյալ Gallup-ը գրում է, որ նրանք վարում են չափավոր կամ անկայուն կյանք, զուտ կամ բացասական կարծիք ունեն իրենց ներկայի կամ ապագայի վերաբերյալ: «Նրանք որոշակի խնդիրներ ունեն կամ կարծում են, որ նման խնդիրներ կունենան ապագայում: Նրանք մտահոգվում են գումարի բացակայությունից եւ որպես կանոն ծխում են»:

Երրորդ՝ տառապողների խմբում ընդգրկվել է հարցվածների մեկ երրորդը: Յուրաքանչյուր երեքից մեկը բացասական սպասելիք ունի ապագա 5 տարիներից: Հիմնական դժգոհությունները կապված են հանապազօրյա հաց վաստակելու, բնակարանի կամ առողջական խնդիրների հետ:

Հայաստանում բարեկեցիկ կյանք վարողների թիվը 2 տոկոսով ավելի է, քան Ադրբեջանում եւ Վրաստանում: Սակայն հարեւան երկրներում մեծ թիվ են կազմում միջին՝ գոյատեւող խմբի ներկայացուցիչները: Համեմատաբար քիչ են տառապողները:

Վերոնշյալ ցուցանիշով Հայաստանը հայտնվել է Աֆղանստանի, Եգիպտոսի եւ Եմենի կողքին: ԱՄՆ-ն 59 տոկոս ցուցանիշով զբաղեցնում է 12-րդ հորիզոնականը: Թուրքիայում, Ռումինիայում եւ Ուկրաինայում բնակչության բարգավաճման մակարդակը կազմում է 16, իսկ Ռուսաստանում՝ 24 տոկոս:

Բարեկեցության առումով առաջին հորիզոնականներն են զբաղեցնում Դանիան, Շվեդիան եւ Կանադան. այս երկրներում բնակչության 70 տոկոսը կենսամակարդակը գնահատում է բարգավաճ. տառապողների թիվը չի գերազանցում 1 տոկոսը:

Հ. Հ.

Ապրիլի 24

Թուրքիան պատրաստվում է ցեղասպանության հարյուրամյակին

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

2015-ը սարերի հետեւում չէ, եւ Թուրքիան աչալուրջ հետեւում ու պատրաստվում է դրան: Դա մարտահրավեր է ինչպես թուրք առաջնորդների, այնպես էլ հայերիս համար: Թե ով առաջինը կհասի եզրագիծը՝ ֆնարկման ենթակա հարց է: Ցեղասպանության հարյուրամյակը շրջադարձային է լինելու, բայց թե ո՞ր կողմն է արձանագրելու առավել միավորներ՝ ցույց կտա ապագան:

Հարյուրամյակին նախապատրաստվելիս թուրքական կառավարությունն օգտագործում է իր «շոշափուկները»: Չենք կարող բացառել, որ նույնիսկ լրագրող Հասան Ջեմալի մասնակցությունը Կալիֆոռնիայում վերջերս կայացած ֆնարկումներին եւ նրա օգտագործած «ցեղասպանություն» բառեզրը այդ «շոշափուկներից» են: Մյուսը թուրքական «Սաբահ» թերթի այն լրատվությունն է, որ կառավարության որոշ ներկայացուցիչներ գուցե մասնակցեն ապրիլխանչորսյան հիշատակի միջոցառումներին՝ փորձ անելով հաղթահարել Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ տիրող հոգեբանական խոչընդոտները եւ երկխոսության եզրեր փնտրելով սփյուռքահայության հետ:

Բայց ամենահատկանշականն արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի հայտարարությունն է, թե 2015-ը հայկական հարցերով զբաղվելու տարի է լինելու: Սա, անշուշտ, մի քանի ձեւով կարելի է մեկնաբանել: Դա կարող է նշանակել, որ «թաղելու են» ցեղասպանության հարցը որոշակի «կոսմետիկական ժեստերի» կամ ցուցադրական ներկայացումների տակ, կամ վճռական եւ վերջնական հարված են հասցնելու դրան:

Արտգործնախարարի՝ CNN-Turk-ին մարտի 26-ին տված հարցազրույցը խորամանկորեն «հյուսված» էր դիվանագիտական երկերեսանիություններով, որոնցից շատերը ամենատարբեր մեկնաբանությունների առիթ կարող են ծառայել: Մինչ վարչապետ Էրդողանն արդեն «լուծել» է ցեղասպանության հարցը՝ կտրականապես ժխտելով այն, արտգործնախարարը խոսում է հայերի ցավը հասկանալու մասին, բայց ակնարկելով, որ հայերն էլ հասկանան իրենց՝ թուրքերի ցավը, կարծես Առաջին աշխարհամարտի ժամանակ թուրքական կողմի մարդկային կորուստների պատճառը հայերը լինեին:

Նա հենց սկզբից սխալ տոնով է սկսում «երկխոսությունը» հայերի հետ՝ որպես իր հակաճառության փաստարկ նշելով, որ հայերի «տեղահանությունները» շատ նման են «Դարդանելի եւ Սարիղամիշի դեպքերին»: Համեմատության ինչպիսի՜ եզրեր:

Օսմանյան կայսրությունը կործանվեց եվրոպական եւ ռուսական կայսրությունների հետ իր ունեցած բախումների հետեւանքով, ունեցավ մարդկային զոհեր, որոնք ոչ մի կապ չունեն հայերի հետ: Իրականում օսմանյան բանակում ծառայող շատ հայեր զոհվեցին Գալլիպոլիի մարտերի ընթացքում:

Էրդողանը գերագույն դեմագոգիայով է զբաղվում, երբ հայտարարում է, որ ոչ մի ցեղասպանություն էլ տեղի չի ունեցել, եւ պահանջում է հայերից գեթ մեկ ապացույց բերել, որ կիսատտեր իրենց պնդումները, շատ լավ գիտակցելով, որ երկրի ներսում այդպիսի ապացույց ներկայացնողն անմիջապես բանտում կհայտնվի քրեական օրենսգրքի 301 հոդվածի դրույթներով, նույնիսկ եթե այդ ապացույցը ներկայացնողը Թուրքիայի միակ Նոբելյան մրցանակակիրը լինի: Բայց արտգործնախարարն առավել զգուշավոր է: Ըմբռնելով, որ կտրուկ ժխտումը մինչ օրս ոչ մի արդյունք չի տվել, նա փորձում է շողոքորթել, կեղծ «ըմբռնողականություն» ցուցաբերելով արտաքին քաղաքականության միջեւ երկար բացատրությունների մեջ խորամուխ լինելով՝ կեղծիքներ է ներկայացնում որպես պատմական փաստեր:

«Ցանկանում ենք կարգավորել մեր հարաբերությունները Հայաստանի ու հայկական սփյուռքի հետ: Դրա համար էլ մենք չպետք է նույն կատեգորիայի մեջ դնենք բոլոր հայերին եւ դիտարկենք նրանց իբրեւ հարցերին միակողմանի մոտեցում ցուցաբերող մեկ ընդհանուր միավոր: Գուցե մեր առջեւ բացվի հաշտեցման ավելի արմատական մի ժամանակահատված», ասում է արտգործնախարարը եւ խրվում թուրք-հայկական հարաբերությունների պատմության ավելի վտանգավոր էջերի մեջ, նշելով. «Նրանք շուրջ 10 դար համատեղ են գոյակցել, որը ձգվում է մինչեւ Մանազկերտի (1071 թ.) ճակատամարտը: Մինչեւ 20-րդ դարի սկզբները փոխհարաբերությունները եղել են վերին աստիճանի հաշտ ու խաղաղ: Որքան էլ իրավաբանական եւ քաղաքական միջոցառումներ ձեռնարկենք, կարեւորը հոգեբանական արգելքների հաղթահարումն է»:

Միայն ցինիկ դիվանագետը կարող է նման հայտարարություններով հանդես գալ, անտեսելով պատմական փաստերը, երբ հայերն այդ երկրում ստրուկի կարգավիճակում էին, իսկ թուրքերը՝ ստրկատերերի: 1862-ի Զեյթունի ապստամբությունից մինչեւ Մուշի զինված խռովությունները այդ հարաբերությունները երբեք էլ «հաշտ ու խաղաղ» չեն եղել:

Ավելին, հակառակ արտաքնապես «հանգստացնող» վերոնշյալ ակնարկներին, Թուրքիան այդուհանդերձ, չափազանց մեծ զայրույթով արձագանքեց Արգենտինայի դաշնային դատախազ Նորբերտո Օժարտիսեի ապրիլի 1-ին կատարած հայտարարությանը, որ «Թուրքիայի կառավարությունը 1915-23 թթ. իրոք ցեղասպանության է ենթարկել հայ ժողովրդին»:

Այդ արձագանքի լույսի ներքո կարելի է եզրակացնել, որ թուրքական կառավարությունը մի թիզ անգամ առաջ չի գնացել հաշտեցման գործընթացում, եւ այդ ամբողջ հռետորական ճոռոմաբանությունները երկու նպատակ են հետապնդում.

ա) մի անգամ եւս մոլորեցնել նախագահ Բարաք Օբամային եւ թույլ չտալ, որ նա «ցեղասպանություն» բառն օգտագործի զոհերի հիշատակի առթիվ իր ամենամյա ելույթի ժամանակ,

բ) նախապատրաստվել դիմակայելու այն բոլոր մարտահրավերներին, որ հայերն են առաջացնում՝ փորձելով 2015-ը վերածել ցեղասպանության համընդհանուր ճանաչման նշանակալի մի տարելիցի:

Այսպիսով, հստակ երեւում է, որ թուրքերը «զինված» են ու պատրաստ՝ դիմավորելու 2015-ը: Նրանք գիտական, քաղաքական եւ դիվանագիտական բոլոր մարզերում վստահաբար կուտակել են բավականաչափ «զինամթերք»՝ դեմ դնելու հայերի ամեն տեսակի հարձակումներին:

Իսկ որտե՞ղ է մեր գլխավոր ծրագիրը:

Նույնիսկ Վաշինգտոնում նախատեսված ցեղասպանության թանգարանի ճակատագիրն է առ այսօր անորոշ, եւ պարզ չէ, թե կբացվի՞ արդյոք 2015-ին կամ մինչ այդ:

Ճիշտ է, անհատական եւ խմբակային աշխատանքներ տարվել են ակադեմիական մակարդակի գրքեր հրատարակելու, հուշարձաններ կառուցելու եւ քաղաքական արշավներ կազմակերպելու ուղղությամբ, բայց համընդհանուր մի ծրագիր դեռեւս չի ձեւավորված:

Թուրքերը պատրաստ են: Իսկ մե՞նք:

Գեորգ, ԱՄՆ

Թարգմ. Հ. Ծ.

Ապրիլի 24-ին Վագըֆլին նորից բազմամարդ կլինի

Ապրիլի 20-ին գերմանական FAZ-ը՝ «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգը», եւ TAZ-ը՝ «Թագեսցայթունգը», ֆելիետոն բաժնում անդրադարձել են Կարսում Մեհմեդ Ազսոյի «հայկական» հուշարձանը ապամոնտաժելու հարցին, այդ առիթով մարմնական վնասվածք ստացած նկարիչ Բեդրի Բայրամի հայտնի դեպքերին: FAZ-ի հայտնի հոդվածագիր Կարեն Կրյուգերը Էրդողանի այս որոշումը «մշակութային եւ դիվանագիտական Desaster» (թրգմ՝ մեծ չարիք, աղետ) է որակում, իսկ Հայմո Շվիլքը «Դի վելթի» ապրիլի 21-ի համարում այդ քայլը, Հայաստան-Թուրքիա հաշտեցման գործընթացից նահանջ արձանագրելով, գրում է՝ «առաջիկա օրերին աշխարհը վկա կդառնա բարբարոսական մի ակտի, որ Թուրքիային աֆղանական «Թալիբանի» հետ նույն ասիճանին կդնի: Խոսքը Բուդդայի՝ 1400 տարվա հնության այն արձանի մասին է, որ 2001-ին ոչնչացվեց»: Թերթը գրում է Թուրքիայի կառավարության՝ Հայոց ցեղասպանությունը ուրանալու շարունակական քաղաքականության մասին՝ եզրակացնելով. Էրդողանի՝ շրջանառության մեջ դրած «հաշտեցման գործընթացը» վերաբերում է միայն արխիվային աշխատանքին՝ դառնալով պատմական հանձնաժողովի մտահոգության առական:

Ապրիլի 20-ին «Թագեսցայթունգը» ընդարձակ հրապարակում է տպագրել Թուրքիայում միակ հայաբնակ գյուղի՝ Վագըֆլիի մասին: Թերթի թղթակից Յուրգեն Գոթթշլիխը Վագըֆլիում հանդիպել է Մուսա լեռան հերոսամարտի վերջին վերապրող Ավետիս Դեմիրչիին, զրուցել գյուղաբնակ ուրիշ հայերի հետ: Նրա ծավալուն պատումը համառոտ՝ ստորեւ:

«Այստեղ բոլորը 97-ամյա Դեմիրչիին «դեդե»՝ «մեծ հայրիկ» են ասում: Նա պատմական դեմք է: «Աբդուլհամիդը՝ Օսմանյան կայսրության վերջին բացարձակ տիրակալ սուլթանը մեր հարեւան գյուղում մի անգամ ծառից կախել էր տվել վերնախավը ներկայացնող 15 հայերի», Ավետիս Դեմիրչիի հիշողություններն է մեջբերում գերմանական TAZ-ը: Դեմիրչիի տունը Մուսա լեռան լանջին է: 1915-ին նա ծծկեր երեխա է եղել: Ծնողները նրան էլ լեռն են բարձրացրել, ուր շրջակա 6 գյուղերից 4500 հայեր են եղել: 1930-ին պրահայաբնակ հրեա Ֆրանց Վերֆելը տիկնոջ՝ Ալմա Մահլերի հետ այցելում է Սիրիա, հանդիպում վերապրողներին ու գրում «Մուսա լեռան 40 օրերը» վեպը: «Բնականաբար դրանք չեմ հիշում, բայց այն, ինչ լսել եմ ազգականներիցս, համեմատելով կարող եմ ասել, թե Վերֆելը լավ է նկարագրել», պատմել է Դեմիրչին: Վագըֆլին, ուր ապրում է Ավետիս Դեմիրչին, այսօր Թուրքիայում միակ՝ դեռեւս ամբողջովին հայկական գյուղն է: 6 գյուղեր են դիմադրել, թեպետ Վերֆելը դրամատուրգիական տեսակետից 6-ը 7, իսկ 53 օր տեւած դիմադրությունն էլ 40 է դարձել: Մյուս գյուղերում թուրքմեններ ու ալեւի արաբներ են բնակվում: Ավետիս Դեմիրչին իր փոքրիկ տանն ապրում է 77-ամյա կնոջ հետ: Որդիները վաղուց են լքել Մուսա լեռը, երկուսն արդեն մահացել են, մեկը շատ հայտնի նկարիչ է Ստամբուլում: Գյուղի մյուս բնակիչներն էլ գանգատվում են, թե գնալով մարդաքանակը նվազում է:

Կուհար Կարթունի ասելով, Վագըֆլին աշխարհի ամենասիրուն տեղն է: Տիկին Կուհարը գյուղի եկեղեցու դպիրն է, այն եկեղեցու, որ 1997-ին վերանորոգվել եւ մասամբ էլ վերաշինվել է: Հավատի այս տաճարը մարդաշատ է լինում միայն հատուկենտ օրերի: 30 հայ ընտանիք, որ միասին 130 մարդ են հաշվվում, չեն կարող եկեղեցին լեցուն դարձնել, բայց հատուկ առիթներով Պոլսից հոգեւորական է գալիս: Կարթունը պատմում է, թե գյուղից երիտասարդները քաղաք են մեկնում, իրենց գյուղում հայկական դպրոց չկա, եւ շատերը Պոլսի գիշերօթիկ դպրոցն են նախընտրում: Մի մասը մնում են այնտեղ, մյուսները արտասահման են մեկնում: Ինքն էլ շատերի նման ազգականներ ունի Գերմանիայում եւ Կանադայում: Ցեղասպանությունից հետո Թուրքիայում մնացած գրեթե բոլոր հայերը Ստամբուլում են ապրում՝ ներկայումս նրանց թիվը 65 000 է: Վագըֆլին բացառություն է, որ պայմանավորված է ժամանակին գյուղաբնակների ցուցաբերած դիմադրությամբ: 1939-ին կարճ ժամանակով ֆրանսիացիների շնորհիվ անկախություն ստացած մարզը հանրաքվեով Սիրիայից տրվեց Թուրքիային: Մուսա-լեռցի հայերը պիտի որոշեին՝ մնա՞լ հայրենի եզերքում, թե՞ ֆրանսիացիների վերահսկմանն անցած Լիբանանում հաստատվել: «Համարյա բոլորը գնացին, Վագըֆլիում էլ կեսն են մնացել, բայց չէ՞ որ սա է մեր տունը», գանգատվում է Դեմիրչին, որ հիշյալ իրադարձությունն իր կյանքի ամենաողբերգական դրվագն է համարում:

Գյուղապետ Պերճ Կարթունն էլ նկատել է տալիս, թե աշխատանք չկա: Փորձել են էկոլոգիապես մաքուր բանջարեղեն ու նարինջ աճեցնել, արտնագիր են ստացել Իզմիրում գործող գերմանական համապատասխան մի գրասենյակից, բայց տարածքն այնքան փոքր է, որ արտահանման մեծ ծավալներ չի կարող ընդգրկել, վարձատրությունն էլ բավարար չի լինի: Մուսա լեռան ամենամեծ գյուղը 1915-ի տեղահանությունից առաջ 3000ունոլուքն էր, որտեղ ժամանակն այնքան քիչ բան է փոխել, որքան 6 գյուղից ոչ մեկում: Նեղ, դժվարանցանելի փողոցներ, ուր գլխավոր երթեւեկը շարունակում է ավանակը մնալ: Վագըֆլին շատ է փոխվել: Ստամբուլում կամ արտասահմանում վերաբնակություն հաստատած նախկին գյուղացիները իրենց տանը ներդրումներ են անում՝ երբեք քարաշեն տներ հյուրանոցների են վերածվել: Գյուղատնտեսությամբ քչերն են տուն պահում, ասիճանաբար զբոսաշրջությունն է եկամտի զորեղ աղբյուր դառնում: Գյուղական տրճարանն էլ ռեստորանի է վերափոխվում: Ամռանը՝ հատկապես Ս. Աստվածածնի տոնին՝ խաղողօրհնեքին կյանքն աշխուժանում է: Աշխարհի տարբեր անկյուններից ազգականները վերադառնում են գյուղ, բայց օտարներն էլ տարեցտարի շատանում են՝ ուզում են Թուրքիայում հայաբնակ վերջին գյուղը սեփական աչքերով տեսնել», պատմում է Կարթունը:

Ապրիլի 24-ին, երբ աշխարհաբնակ հայերը «Մեծ Աղետն» են հիշատակում, այս տարի առաջին անգամ Վագըֆլին նորից բազմամարդ կլինի, գրում է «Դի թագեսցայթունգը»՝ իր երկար հրապարակմանը կցելով Հայոց ցեղասպանության մասին պատմական համառոտ մի տեղեկանք:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

ԱԶԳ

Միջազգային

ԱԴՐԲԵՋԱՆ

Առասել եւ իրականություն

Ադրբեջանի պաշտոնական քարոզչությունը երկիրը բնութագրում է «հանդուրժողական, բազմազգ եւ բազմադավան»: Ըստ էության, դա նպատակն է տպավորություն ստեղծել, որ «ադրբեջանցին ոչ թե էթնիկական, այլ՝ քաղաքացիական բնորոշում է»: Այսինքն, հանրաքվեության բոլոր բնակիչները քաղաքացիությամբ ադրբեջանցի են, ադրբեջանահպատակ, ազգությամբ՝ ազերի- թուրք, մեսխեթցի թուրք, թաթար, քուրդ, թաթ, լեզգի, ռուս: Եվ անգամ... հայ:

Ի հակակշիռ, ադրբեջանական կողմը Հայաստանին եւ ԼՂՀ-ին մեղադրում է «էթնիկական անհանդուրժողականության» մեջ: Հիմնական «փաստարկն» այն է, որ «Հայաստանի բնակչությունը գրեթե բացառապես բաղկացած է հայերից, ԼՂ-ից ադրբեջանցիները բռնատեղահանվել են»:

Մի կողմ թողնելով այդ անհեթեթությունը, փորձենք հայացք ձգել Ադրբեջանի բնակչության ազգային կազմին: Նախապես ասենք, որ դիտարկումների համար հիմք ենք ընդունել ադրբեջանցի ուսումնասիրող Արիֆ Յունուսովի «Ադրբեջանի էթնիկ կազմն ըստ 1999թ. մարդահամարի» հոդվածը /տես՝ http://www.iea.ras.ru/topic/census/mon/yunus–mon2001.htm/:

Ըստ այդմ, 1989թ.՝ խորհրդային վերջին մարդահամարի տվյալներով, Ադրբեջանում հաշվվել էին 112 ազգություններ եւ էթնիկ խմբեր: Բնակչության 83 տոկոսը կազմել են ադրբեջանցիները, մնացածը՝ ռուսները, հայերը, լեզգիները եւ այլն: Ըստ դավանանքի բնակչության 87 տոկոսը մահմեդական էր, 12-ը՝ քրիստոնյա՝ ուղղափառ եւ լուսավորչական:

1999թ. մարդահամարի պաշտոնական տվյալներով Ադրբեջանի բնակչությունը կազմել է 7 995,4 մարդ, որից 7 205,5-ը կամ 90 տոկոսը՝ ադրբեջանցի: Ընդ որում, գյուղական շրջաններում եւ Նախիջեւանում ադրբեջանցիները կազմել են բնակչության 96-99 տոկոսը, այդ թվում Բաքվում՝ 88 տոկոսը:

Ըստ ազգությունների պատկերը հետեւյալն է.

1979թ. Ադրբեջանում բնակվել է 475, 3, 1989-ին՝ 392,3 , իսկ 1999-ին՝ 141, 7 հազար ռուս: Այսպիսով, 20 տարում ռուսների քանակը երեք անգամ կրճատվել է, տոկոսային հարաբերակցությամբ՝ ամբողջ բնակչության հետ համեմատած, 5,6-ից հասնելով 1,8-ի:

1989թ. մարդահամարի տվյալներով Ադրբեջանում հաշվվել է 390,5 հազար հայ: 1999թ.՝ 645, որից 36-ը՝ տղամարդ, 609՝ կին:

Մինչ անկախություն ձեռք բերելը Ադրբեջանում մարդահամարի ժամանակ իսլամադավան վրացիները չեն հաշվառվել: Ուստի հնարավոր չէ դատել՝ ավելացե՞լ է նրանց թվաքանակը, թե՞ նվազել: 1999 թ. հաշվառվել է 14,9 հազար իսլամադավան վրացի:

10 տարում չի աճել Ադրբեջանում ապրող լեզգիների, թաթերի եւ թաթարների թվաքանակը, ինչից ենթադրվում է, որ այդ ազգությունները գտնվում են ուծացման եզրին: Նույն ժամանակահատվածում Ադրբեջանից հեռացել է 31,3 հազար հրեա: 1999թ. հաշվառվել է 8,9 հազար հրեա՝ ներառյալ հուդայականություն ընդունած թաթերին:

Ըստ Յունուսովի ուսումնասիրության, Ադրբեջանում կրկնակի կրճատվել է ուդիների թվաքանակը: 1999թ. տվյալներով 4,2 հազար ուդի բնակվել է Նիժ գյուղում, ինչը կասկածելի է թվում:

Սրանք են, ահա, ադրբեջանցի ուսումնասիրողի վկայակոչած փաստերը: Իսկ եթե նկատի ունենանք նաեւ այն, որ ըստ Յունուսովի, 1999թ. Ադրբեջանի ռուս բնակչության շուրջ 30 տոկոսն անաշխատունակ տարիքի մարդիկ էին, ապա թերեւս կարելի է եզրակացնել, որ այս պահի դրությամբ ռուս բնակչությունն Ադրբեջանում ավելին չէ, քան՝ 100 000: Նույնը՝ այլ ազգային փոքրամասնությունների պարագայում. ամենուր նկատելի է թվաքանակի անկում: Իսկ դա ամենեւին էլ չի խոսում Ադրբեջանի՝ «բազմազգ պետություն լինելու» օգտին:

Յունուսովի ուսումնասիրությունն, ընդհակառակը, վկայում է, որ ոչ հեռավոր անցյալում Ադրբեջանն իրոք բազմազգ է եղել: Իսկ ավելի հեռավոր անցյալում, ամենայն հավանականությամբ, թուրք-ազերի էթնիկական խումբը փոքրամասնություն է կազմել: Սակայն շուրջ մեկդարյա ուծացման քաղաքականությունը, որ սկզբնավորվել է Ադրբեջան պետության հռչակմամբ, խորացել է ԽՍՀՄ գոյության տասնամյակներին եւ իր բարձրակետին հասել անցյալ դարավերջին՝ որպես էթնիկական զտումների պետական քաղաքականություն, հանգեցրել է նրան, որ երբեմնի էթնիկական բազմազանության փոխարեն առկա էր ազերի-թուրքական տարի էթնիկական բացարձակ գերակայություն:

Իսկ ի՞նչ վիճակ է այսօր՝ Յունուսովի ուսումնասիրությունից 10 տարի անց (հոդվածը տպագրվել է 2001թ.), ոչ ոք չգիտի: Ադրբեջանի պետական վիճակագրական ծառայության կայքէջում բնակչության էթնիկական կազմի մասին տվյալներ չկան: Ամենայն վստահությամբ կարելի է պնդել, որ իշխանությունները պարզապես խուսափում են դրանք հրապարակելուց, քանի որ պատկերն ավելի քան խայտառակ է:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ
Ստեփանակերտ

Ճապոնիան 50 մլրդ դոլար կհատկացնի աղետի հետեւանքների վերացմանը

Ճապոնիայի կառավարությունը ընդունել է ընթացիկ ֆինանսական տարվա լրացուցիչ բյուջե: Կիրառդ գործակալությունը հաղորդում է, որ դրանով նախատեսվում է 4,02 տրիլիոն իեն (մոտ 50 մլրդ դոլար) հատկացնել երկրաշարժի եւ դրան հաջորդած վթարների հետեւանքների վերացմանը:

Երկրորդ աշխարհամարտից հետո մարտի 11-ի երկրաշարժը եւ ցունամին ամենամեծ վնասները պատճառեցին Ճապոնիայի տնտեսությանը: Կորբ քաղաքի 1995 թ. երկրաշարժի հետեւանքների վերացման համար ծախսվել էր 3,23 տրիլիոն իեն:

Երկրի ֆինանսների նախարարությունում հավաստիացնում են, որ պետությունը կկարողանա աղետյալ շրջանի վերականգնմանն ուղղված միջոցներ գտնել առանց լրացուցիչ արժեթղթերի թողարկման:

Միագիի պրեֆեկտուրայում մարտի 11-ին տեղի ունեցած 9 մագնիտուդով երկրաշարժի եւ ցունամիի հետեւանքով զոհվածների թիվը մոտ 14 հազար է, անհետ կորած է մոտ 17 հազար մարդ: Բացի դրանից, «Ֆուկուշիմա-1» ատոմակայանի վթարները հանգեցրել են ռադիոակտիվ նյութերի արտահոսքի:

Լիբիայի իշխանությունները սկսել են զինել բնակչությանը

Լիբիայի իշխանությունները հայտարարել են, որ սկսում են զենք բաժանել երկրի բնակչությանը: Կառավարության պաշտոնական ներկայացուցիչ Մուսա Իբրահիմի խոսքերով, որոշումն ընդունվել է ի դեմս ՆԱՏՕ-ի զորքերի ցամաքային ներխուժման: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

«Շատ քաղաքների բնակիչներ արդեն ինքնապաշտպանության ջոկատներ են կազմակերպել ներխուժմանը հակազդելու նպատակով», ասել է պաշտոնյան, ավելացնելով, որ երկրի բոլոր բնակիչները սանձալու են հրաձգային զենք:

«Եթե ՆԱՏՕ-ն փորձի ափ իջնել Միսուրատայում կամ Լիբիայի մեկ ուրիշ քաղաքում, ապա մենք դժոխք կստեղծենք զավթիչների ոտքերի տակ: Դա կլինի Իրաքից տասնապատիկ վատ կրակի ծով», ընդգծել է Մուսա Իբրահիմը:

Նրա խոսքերով, երկրի բնակիչները պատրաստվում են կռվել ոչ թե ապստամբների, այլ ՆԱՏՕ-ի զորքերի դեմ, որոնք խանգարում են գրավել Միսուրատան: «Այնտեղ մեր խնդիրները ուժերի հավասարության հետեւանք չեն: Քաղաքի եւ շրջակայքի բոլոր բնակիչները իրենց հռչակել են օրինական կառավարության դաշնակիցներ», ասել է պաշտոնյան, շեշտելով, որ այդ մարդիկ «առանց այդ էլ լավ զինված են»:

Օտարերկրյա թղթակիցների տվյալներով, Միսուրատա քաղաքի արեւելքը (ներառյալ նավահանգիստը), հյուսիսը, արեւմուտքի մի մասը եւ կենտրոնի մեծ մասը մնում են ապստամբների ձեռքին, իսկ հարավը Քադդաֆիի կողմնակիցների վերահսկողության տակ է:

Բնակչությանը զինելու վերաբերյալ Իբրահիմի արած հայտարարությանը նախորդել էին այն լուրերը, որ Բենգազի են գործուղվելու բրիտանացի, ֆրանսիացի եւ իտալացի զինվորական խորհրդականներ: Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին միաժամանակ խոստացել էր, որ իր երկիր ռազմօդանավերը կուժեղացնեն Լիբիայի կառավարական զորքերի դիրքերի ռմբակոծումները:

Ռոյթերը նաեւ հաղորդում է, որ ԱՄՆ-ը երկու անօդաչու թռչող օդանավ է ուղարկել Քադդաֆիի վարչակարգի դեմ: Պենտագոնում կարծում են, որ հրթիռներով զինված այդ սարքերը արդյունավետ միջոց են, քանի որ «կարող են ցածրից թռչել եւ մեծ ճշգրտությամբ հարվածել օբյեկտներին»:

ԳԵՐՄԱՆԻԱ

Հրաժեշտ Յոլակ Տեր-Հարությունյանին

«Հայկական աշխարհեն ի՞նչ կա», սա թոքաբորբի պատճառով անկողնուն գամված 91-ամյա Յոլակ Տեր-Հարությունյանի վերջին հարցն էր, որ շատ լավ բնութագրում է իրեն՝ գերմանահայ համայնքի նահապետին, մասնագիտությամբ օդերասար հաջողակ գործարարին, որի հոգու ու մտքի ոսկնյակը խայտաբղետ աշխարհի ինչ գույներով էլ լցված լիներ, միշտ Հայաստանն ու հայկականը կենտրոնում էր պահում: Նա մեծ իմաստով գեղեցիկի սիրահար էր, մի քանի մշակույթի, մի քանի լեզվի կրող, բայց դրանց մեջ արմատականը Վան-վաստրականցու իր կերպարն էր՝ արծվի հայացքով, հաստատուն քայլքով, մեծ ուրոյթով: Նացիստական ճամբարներից հենց նրան էր հաջողվել փրկել իր հայրենակիցներից շատերին, բայց դրա մասին չէր բարձրաձայնում, նրան էր տրված մեծ՝ հայրենանվեր գործերին նյութապես սատար կանգնելու առաքելությունը, անում էր մեծագույն սիրով՝ առանց հաշվելու՝ հոգի դնելով ու մշտապես հաջողում էր:

1989-ին հիմնել էր «Հայկական ուսմանց հիմնադրամ» հասատությունը, որն ապագայում Բոխումի «Սփյուռք եւ ցեղասպանություն» գիտահետազոտական ինստիտուտի հիմքը դարձավ: Համեստ մարդ էր, բայց առատախոս էր դառնում, երբ հիշյալ հաստատության հեղինակած գործերն էր ներկայացնում:

Ինստիտուտի ղեկավար Միհրան Դաբաղը, որ Տեր-Հարությունյանի բացառիկ բարեկամությունը վայելելու պատիվն է ունեցել տարիներ շարունակ, բանաձեւում է՝ «նյութական կարելիության տեր այն քիչ անձերեն է, որ իր վերլուծական մտքով գիտության եւ քաղաքականության կապը կրցավ հաստատել: Միշտ գիտցավ զանազանել կարեւորը՝ մեր ազգին ապագա խոստանալով»:

Ապրիլ-24-յան հուշահանդեսներին նրա ներկայությունը համայնքը զգոն ու զգաստ, պատշտպանված էր պահում: Այս անգամ նրա պայծառ հիշատակն է մեզ ամուր պահելու:

Հոգեհանգիստը՝ ապրիլի 28-ին, ժամը 10.30-ին, Դյուսսելդորֆի մայր եկեղեցում՝ Ալթշտադտի Ս. Լամբերտուսում, հուղարկավորությունը՝ նույն օրը, ժամը 12.15-ին, Դյուսսելդորֆի Հյուսիսային գերեզմանոցում՝ մոր կողքին:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Բունդեսթագից՝ ցեղասպանություն, կառավարությունից՝ խաչքարի տեղադրում

Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը (ԳԿԽ) նամակով դիմել է Բունդեսթագի պատգամավորներին՝ 1915-ի իրադարձությունները կոչել ցեղասպանություն բառեզրով: Հիշեցնենք, որ 2005-ին Գերմանիայի օրենսդիր մարմնի «Հայկական» բանաձեւում բնաջնջում բառը թեպետ բազմիցս գործածվել էր էջեր կազմող տեքստում, սակայն վերնագրում ցեղասպանություն իրավաբանական բառեզրի փոխարեն շրջանառվել էր Massaker՝ կոտորածներ, ջարդ ձեւակերպումը: ԳԿԽ-ն մեկ ուրիշ նամակ էլ ուղղել է դաշնային կառավարության մշակույթի եւ տեղեկատվության հանձնակատար Բերնդ Նոյմաննին՝ խնդրելով սատարել Բեռլինում Ռայխսթագի գմբեթի հովանու ներքո Հայոց հիշողության խաչքարի տեղադրմանը, որի հանդիսավոր բացումը պիտի լինի 2015-ի ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին: Հիշատակելով պարոն Նոյմաննի հայրենի Բրեմենում խորհրդանշական նման մի վայրի գոյությունը, ԳԿԽ-ն նկատել է տվել, թե Բեռլինում այն բոլորովին այլ չափ ու նշանակություն է ունենալու:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Ամերիկահայեր՝ Էլիս Այլենդի «պատվո մեդալի» մրցանակակիրներ

Ամերիկայի «Ազգային էթնիկական կազմակերպությունների կոալիցիան» (ԱԵԿԿ) այս տարվա իր 25-րդ ավանդական «պատվո մեդալի» մրցանակների հանձնումը նախատեսում է անցկացնել մայիսի 7-ին:

Մրցանակները սովորաբար տրվում են ամենատարբեր բնագավառներում (կառավարական, կրթական, բիզնեսի, լրատվության, սպորտի, առողջապահության, այլն) աչքի ընկնող ամերիկացի քաղաքացիներին, որոնց գործունեությունը ինչ-որ ձեւով ոգեւորել է ուրիշներին ու փոխել, բարելավել նրանց կյանքը:

«Արմինյն միրոր սփեթեյթր» շաբաթաթերթի փոխանցմամբ՝ մարտի 9-ին Նյու Յորքի «Հարվարդ» ակումբում ԱԵԿԿ-ի նախագահ Նասեր Կազեմինին հայտարարել է մեդալի արժանացած անձնավորությունների անունները, որոնց թվում են ամերիկահայեր Մարգարեն Աձեմյան-Ահներտը (գրող), Մայքլ Արամը (դիզայներ) եւ Գեյլ Թալանյան-Օ'Ռեյլին («Մեյդ ին Արմինիա Դիրեկտի» հիմնադիր):

Հ. Ծ.

Կարսի հուշարձանը քանդելու դեմ բողոքը շարունակվում է

Այսօր Կարսում բողոքի ակցիա է տեղի ունենալու հայ-թուրքական բարեկամության հուշարձանը քանդելու դեմ: Թուրքական աղբյուրների համաձայն՝ այդ մասին մամուլի ասուլիսում ասել են այդ արձանի կառուցումը թույլատրած Կարսի նախկին քաղաքապետ Նաֆի Ալիբեյօղլուն եւ արձանի քանդակագործ Մեհմեդ Ամսոյը: Կարսի նախկին քաղաքապետը նշել է, որ Էրդողանը՝ արձանը քանդելու իր հրահանգով նպաստեց, որ ամբողջ աշխարհում շոշափվի Կարսի անունը: «Այս ընթացքում Կարսի հուշարձանի հետ կապված 5 հազար հրապարակում է եղել: Մեր քաղաք են այցելում հազարավոր տեղացի եւ արտասահմանցի զբոսաշրջիկներ: Հուշարձանի ավարտից հետո նախատեսել էինք կառուցել արհեստական ջրվեժ, ճոպանուղի եւ ռեստորաններ», նշել է Կարսի նախկին քաղաքապետը: Իսկ հուշարձանի հեղինակ Մեհմեդ Ամսոյի խոսքով՝ ապրիլի 23-ին հուշարձանի քանդման դեմ բողոքի ակցիային միանալու համար Կարս են ժամանելու 200 արվեստագետ:

Մ. Խ.

ԱՍՈՒԼԻՍ

Ոչ միայն դիվանագիտության, այլեւ գրականության միջոցով

Ինչո՞ւ ներկայացնել Հայոց ցեղասպանության թեման ժամանակակից հայ գրականության մեջ: Այս հարցի շուրջը երեկ խոսում էին «Հայելի» ակումբի բանախոսները: Երիտասարդ արձակագիր **Արամ Պաչյանի** կարծիքով՝ Ցեղասպանությանն առնչվող գրականությունը չպետք է ներառի միայն վավերագրական նյութեր, այլեւ գեղարվեստական նյութ. «Այսինքն՝ այդ թեմայով գրքերը պետք է ունենան նաեւ գեղարվեստական արժեք»: Արամ Պաչյանը որպես օրինակ անդրադարձավ **Վահագն Գրիգորյանի** «Ժամանակի գեսը» վեպին, որը գեղարվեստական գործ լինելուց զատ նաեւ վավերագրական նյութ է: Վահագն Գրիգորյանը եւս ներկա էր ասուլիսին, նա նշեց, որ իր վեպում փորձել է ցույց տալ Եվրոպայի մեղսակցությունը Հայոց ցեղասպանությանը. «Մեր գեղարվեստական գրականությունը պետք է ցույց տա, որ եվրոպական հասարակությունը, որն այսօր իրեն զգում է մարդասերի դերում, իրականում այդպիսին չէ. եվրոպացիները եւս մեղսակից են»: Թեեւ արձակագիր Գրիգորյանի գիրքն ուղղված է նաեւ եվրոպական հասարակությանը, սակայն որեւէ լեզվով դեռ չի թարգմանվել: Բանախոսները միակարծիք էին, որ նման գրքերի թարգմանության համար պետական ուշադրություն ու աջակցություն են հարկավոր: «Ի վերջո, գեղարվեստական գրականությունը կարող է անել այն, ինչը չի կարող անել դիվանագիտությունը», հավելեց բանաստեղծ **Հուսիկ Արան**:

Ցեղասպանությանը վերաբերող գրականությունը միշտ էլ հետաքրքրել է մարդկանց ինչպես Հայաստանում, այնպես էլ օտար երկրներում: Վահագն Գրիգորյանը նշում է. «Երբ Թուրքիայում Ցեղասպանության հարցը շոշափող գիրք է հրատարակվում, ամբողջությամբ սպառվում է»: Հուսիկ Արան էլ հիշում է, որ խորհրդային տարիներին գրողները սիրված էին գրականության միջոցով բարձրաձայնել Մեծ եղեռնի մասին, քանի որ ժամանակին այս թեման մոռացության էին մատնում. «Սակայն հիմա Ցեղասպանության թեման մեզ պետք է ուժ տա՝ խեղճացնելու փոխարեն: Երիտասարդությանն ուժ տվող ու ոգին բարձրացնող գրականություն է հարկավոր»:

Հարցին, իսկ ինչպիսի՞ն է ժամանակակից թուրքի կերպարն ըստ մտավորականների, Վահագն Գրիգորյանը պատասխանեց. «Բոլոր տեսանկյուններով էլ կարելի է մոտենալ թուրք մարդու կերպարին, այն բազմակողմանի է, բայց եթե խոսքը գնում է թուրքական քաղաքականության մասին, ապա վերջին հաշվով՝ հայերի հանդեպ այն չի փոխվել»:

Ի. Պ.

«Գրական դիմանկարներ» գրքույկի առիթով

Աբովյան փողոցի «Արբրիջ» գրախանութ-սրճարանը օրեր առաջ դարձյալ հյուրընկալ էր. այս անգամ մտավորական մի խմբի հանդիպումն այնտեղ Փարիզի «Սիժեստ» հրատարակչության լույս ընծայած «Երեւանյան դիմանկարներ» ֆրանսերեն գրքույկի առիթով էր: Դրսում հորդ անձրեւ էր՝ ժանգոտած օդի, ներսում տաք զրույց՝ արվեստագետ մարդկանց մտքերի փոխանակման: «Արբրիջի» պատերի լուսանկարները գրքույկի մթնոլորտն էին փոխանցում: Իսկ գրքույկը ակնարկների շարք է Երեւանի մասին, այստեղ ապրող մարդկանց միջոցով, որոնց պատմությունները ստեղծում են քաղաքային կյանքի պատկեր՝ ընթացող ժամանակի մեջ՝ ավելի անմիջական, կենդանի եւ այսօրեական՝ տարբերությամբ ընդունված դասական մոտեցումների (քաղաքի պատմություն, ճարտարապետություն): Քաղաքի կերպարը ստեղծում են մարդիկ: Այս մոտեցումով են կազմել գիրքը հեղինակներ **Վարուժան Սիրապյանը** եւ նրա վաղեմի ընկեր ֆրանսիացի լուսանկարիչ **Իվ Դեվյուլֆը**, որն այժմ ֆրանսիական հեռուսաընկերություններից մեկի աշխատակիցն է:

Դիմանկարային այս շարքը շարունակվելու է եւ եթե կրկին անդրադարձ լինի Երեւանին, հուսանք, որ ուրիշ արժանավոր մարդիկ եւս, որ կան մեր քաղաքում, կպատմեն սովորական ու անսովոր պատմությունը մեր:

Իվ Դեվյուլֆը Հայաստան առաջին անգամ Սոֆիայի երկրաշարժի օրերին եկավ, երկրորդ անգամ՝ 22 տարի հետո, անցյալ տարվա սեպտեմբերին: Սիրեց մեր քաղաքն ու իր բնակիչներին, նրա ֆոտոխցիկն այստեղ որսաց ու արձանագրեց հետաքրքրական շաս պահեր ու երեւույթներ: Մարդկանց ճանաչելու համար նրանց հետ շփվել է պետք, զրուցել. լրագրողի մասնագիտությունն օգնեց լուսանկարչին՝ հասկանալու նրանց առօրյան ու հոգսը: Եվ ստեղծվեցին երեւանցի պարզ մարդկանց կերպարներ: Ահա փողոցի ծաղկավաճառն ու երեւանյան տախիների վարորդները, որոնց անմիջական խոսք ու զրույցը այս խավի մարդկանց հետաքրքրական դիմանկար է ստեղծում: Քաղաքային միջավայրի, ինչպես ասում են, աղը մտավորական շերտն է, արվեստի, գիտության մարդիկ, որ հարուստացնում ու զարդարում են այդ կյանքը, պատմություն ստեղծում: Սամվել Գասպարյանը «Արեգ» հրատարակչության տնօրենն է՝ իր գործի նվիրյալ, գիր ու գրականության մտավորական: Սամվել Երիցյանը՝ վինագործների հայտնի գերդաստանից, շարունակում ու զարգացնում է նախորդների ազնիվ արվեստը: «Արբրիջի» տնօրեն Շաֆե Հավան Կարապետյանը, ծագումով Պարսկաստանից, այստեղ՝ Երեւանում, իր բացած ինքնատիպ սրճարան-գրախանութով, գողտրիկ ու սիրելի անկյուն է ստեղծել:

Այդպես անցնում է քաղաքի ռիթմը՝ դանդաղ ու հանգիստ, իր մարդկանցով, բարքերով ու սովորություններով, լավ ու վատ կողմերով: Իվ Դեվյուլֆի ֆոտոխցիկը, բնականորեն, արձանագրել է ոչ հաճելի պահեր եւս: Տավոր՝ Երեւանի պատմության ամենահին նմուշների, ուրարական քաղաքակրթության վաղնջագույն հետքերի՝ Էրեբունի հնավայրի քարերի անխնամ վիճակներ-անհեթեթ խզբզանքներ:

Վարուժան Սիրապյանը ֆրանսահայ մտավորական է, հիմնականում գրահրատարակչական գործունեությամբ զբաղվող: Ավանդույթներով ու զարգացումներով հարուստ ֆրանսիական հրատարակչական միջավայրում կայանալը այդքան էլ հեշտ չէ. ջանքեր ու աշխատանք շատ է պահանջում: Նրա գլխավորած SIGEST հրատարակչությունը 2004 թվականից 40-45 գիրք է արդեն լույս ընծայել՝ հիմնականում գիտական, քաղաքական, մշակութային ուղղվածությամբ: 2007-ին Ֆրանսիայում, երբ Հայաստանի մշակութային տարի էր անցկացվում, հայերեն թարգմանվեց եւ տպագրվեց «Տենտենի արկածները» կոմիքսները (պատկերապատումներ): Հայաստանի հետ համագործակցություն սկսվեց «Արեգ» հրատարակչության «Հայաստանի հրաբալիքներ» հանրագիտարանի առիթով, որի երեւանյան հայերեն տպագրությունը արագ սպառվեց: Փարիզում գիրքը լույս տեսավ նոր, գեղարվեստական ավելի շքեղ ձեւավորմամբ եւ դարձյալ հաջողություն արձանագրեց: Համատեղ աշխատանքի արդյունքում ստեղծվեցին նաեւ Ֆրանսերեն-հայերեն, Հայերեն-ֆրանսերեն բառարանները: Այժմ ֆրանսերենով հրատարակության է պատրաստվում Հովհաննես Թումանյանի բալլադների, պոեմների եւ հեքիաթների պատկերազարդ ընտրանին, որ կմասնակցի Ժնեւի գրքի միջազգային տոնավաճառին, ուր Հայաստանը ներկա է լինելու որպես պատվո հյուր:

2004-ի վերջերին Վարուժան Սիրապյանը Փարիզում ձեւավորեց «Արշակ Չոպանյան» ինստիտուտը, որն աշխատանքներ տանում է ազգային-քաղաքական հարթության մեջ: Այդ թվականին լրացավ գրող, մշակութաբան, հասարակական գործիչ, հայագետ-թարգմանիչ Արշակ Չոպանյանի մահվան 50-ամյակը. «Ուզեցինք իր աղրած տան վրա հուշատախտակ մը դնել: Բայց այդ նույն տարին սկսան Թուրքիո Եվրոպա մտնելու խոսակցությունները: Թուրքերը գիրքերով ու ֆիլմերով լոբբիինգ սկսան ընել՝ ցուցնելու համար, թե Թուրքիան մոդեռն, լայֆ, դեմոկրաս երկիր մըն է: Մենք ալ, ինչպես Արշակ Չոպանյանը 100 տարի առաջ ըրած էր, որոշեցինք Թուրքիոյ իրական պատկերը տալ՝ ինչպես պոզիտիվ, այնպես էլ նեգատիվ կողմերով ներկայացնել»: Ժողովածուն խորագրվեց «Ճերմակ գիրք»՝ ուղղված հարցի թաքցված, չերեւացող կողմին, ընդգրկելով այնպիսի նյութեր, որ չէին հրապարակվի ֆրանսիական մամուլում: Գրքի 1600 օրինակ տարածվեց դիվանագիտական շրջանակներում, բաժանվեցին եվրոպական պառլամենտականների, պատգամավորների, սենատորների:

Ավելի նպատակային գործունեությունը պահանջում էր համակարգված եւ պարբերական աշխատանք. մտահղացվեց եւ իրագործվեց «Եվրոպա եւ Արեւելք» ֆրանսերեն պարբերականը, որ լույս տեսնել սկսեց տարին 2 անգամ: Հանդեսն ունի հասակ քաղաքական-հասարակական ուղղվածություն եւ թեմատիկ առանձնացում, ի մասնավորի՝ Փոքր Ասիայի, Կովկասի եւ Մերձավոր Արեւելքի երկրների հետ այնպիսի փոխհարաբերությունների շուրջ, որոնք ուղղակիորեն կամ միջնորդված առնչվում են հայությանը, հայ դատին: Բացի 10 մշտական հեղինակներից, ամսագրի հետ համագործակցում են հայ եւ օտարազգի, ամենատարբեր մասնագիտությունների տեր անձինք՝ Վարուժան Սիրապյանի ընդհանուր խմբագրությամբ եւ առաջնորդողով:

ՄԵԼՍԻՆԱ ԲԱԴԱԼՅԱՆ

«Կռունկ» երգչախմբի համերգները մայր հայրենիքում

ՀԲԸՄ Մոնտեվիդեոյի (Ուրուգվայ) «Կռունկ» երգչախումբը հիմնադրվել է 1993 թվականին: Երեսունհինգ մարդուց բաղկացած երգչախումբը, որի անդամների տարիքը 20-75 է, ղեկավարում է Ալվարո Հակոբյանը, որ հանդիսանում է նաեւ Մոնտեվիդեոյի ֆիլհարմոնիկ նվագախմբի ղեկավարը: Երգչախմբի երգացանկում ընդգրկված են հայկական ժողովրդական եւ աշուղական երգեր:

Եվ ահա, «Կռունկ» երգչախումբը հյուրախաղերով ժամանել է մայր հայրենիք: Ապրիլի 26-ին Երեւանի «Առնո Բաբաջանյան», իսկ ապրիլի 28-ին Գյումրիի Արվեստների ակադեմիայի համերգասրահներում կայանալիք համերգները նվիրված են Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին:

ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը երեկ ընդունել է «Կռունկ» երգչախմբին, ողջունել նրանց այցը ու ներկայացրել է նախարարության գործունեության հիմնական ուղղություններն ու առաջիկա ծրագրերը: Երգչախմբի անդամները շնորհակալություն են հայտնել ջերմ ընդունելության համար ու նաեւ արտահայտել են իրենց անսահման ոգեւորությունն ու երջանկությունը հայրենիքում գտնվելու կապակցությամբ եւ պատրաստակամություն են հայտնել աջակցել իրենց համայնքում հայկական ազգային ավանդույթները, լեզուն եւ մշակույթը պահպանելուն եւ սփյուռքի նախարարության ծրագրերի իրականացմանը:

Մ. Մ.

Ս. Աստվածածին (Կաթողիկե) եկեղեցու տարածքում իրականացվում է հնագիտական հսկողություն

Ինչպես տեղեկացնում է ՀՀ մշակույթի նախարարությունը, գիտամեթոդական խորհրդի նիստում քննարկվել է Երեւանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցված Աբովյան 15 հասցեում գտնվող Երեւանի Կաթողիկե սուրբ Աստվածածին եկեղեցու եւ նախատեսվող համալիրի տարածական եւ տեսողական ընկալման ներդաշնակության, ինչպես նաեւ տարածքի ուսումնասիրման (պեղման) խնդիրներին:

Քննարկման ընթացքում գիտամեթոդական խորհրդի անդամների կողմից արվել են դիտողություններ եւ առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են Կաթողիկե սուրբ Աստվածածին եկեղեցու եւ նախատեսվող համալիրի տարածական եւ տեսողական ընկալման ներդաշնակության, ինչպես նաեւ տարածքի ուսումնասիրման (պեղման) խնդիրներին:

Մ. Մ.

Վկայություն

Էմիլ Կարլիեի «Կոտորածների մեջ» փաստա-վավերագրական գրառումների գրքի թարգմանությունն (Լաուրա Մարկոսյան) ու հրատարակումը (Ռազմիկ Մարկոսյան) կարեւորվում է ոչ միայն ականատեսի վկայության համար, այլ նրա պետական տեսակետը լինելու պատճառով: Այս գիրքը գալիս է դասվելու եւ լրացնելու հայության վկայությունների շարքը:

Ոճրագործությունը վերապրածներից ամբողջ աշխարհում, առավել եւս՝ Հայաստանում, այսօր հաշված թվով մարդիկ են ողջ մնացել: Ներկայիս ավագ սերունդը ժամանակին ականատեսը եղավ ցեղասպանությունից մազապուրծ հայերի տառապանքներին ու վերընձյուղմանը՝ դրանով իսկ երկրորդված վկան լինելով 1915-ի Հայոց մեծ եղեռնի: Նոր սերունդը, սակայն, չի կրում ցեղասպանության վկայի հոգեբանությունը՝ երբեք առնչված չլինելով որեւէ ականատեսի հետ: Այս խզումը վերացնելու համար անհրաժեշտ է կազմակերպել զանգվածային այցելություններ՝ Մեծ եղեռնի վերջին վկաներին ու վկայություններին: Նման կենդանի հաղորդակցության կարիքը ունեն ինչպես սակավաթիվ վկաները, այնպես էլ նոր սերունդը, դրանով իսկ առաջնորդելով ցեղասպանության վկայությունների շարունակականությունը:

ՌԱԶՄԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Ուշուի մրցաշար՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

Մայրաքաղաքի «Դինամո» մարզասրահում այսօր մեկնարկում է ավանդական ուշուի 7-րդ միջազգային մրցաշարը, որը նվիրված է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Այս մասին երեկ «Տեսակետ» ակումբում կայացած մամուլի ասուլիսում տեղեկացրեց ավանդական ուշուի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Տիգրան Չոբանյանը: Հանդիպմանը ներկա էին նաեւ Ղազախստանի ուշուի հավաքականի գլխավոր մարզիչ, միջազգային բարձրագույն կարգի մրցավար, Եվրոպայի ֆեդերացիայի տեխնիկական խորհրդի անդամ Ալեքսանդր Ռադունցեւը եւ Իրանի ուշուի ֆեդերացիայի նախագահ Մեհդի Անայմգռին:

Տիգրան Չոբանյանը նշեց, որ ոմանք տարակուսում են, թե ինչպես կարելի է ապրիլի 24-ին մրցումներ անցկացնել: Ըստ նրա ապրիլի 24-ը ոչ թե սգո, այլ ցեղասպանության զոհերի հիշատակման օր է, ուստի նաեւ մրցումների միջոցով պետք է ցույց տանք մեր ուժը, հայ ժողովրդի ապրելու եւ արարելու կամքը: Տիգրան Չոբանյանը նշեց, որ մրցաշարի անցկացումը հատուկ այս օրերին է կազմակերպվում, որպեսզի այլ երկրներից ժամանած պատվիրակություններն անձամբ այցելեն Ծիծեռնակաբերդ եւ իրենց սեփական աչքերով տեսնեն, թե ինչպես է հայ ժողովուրդը հարգում ցեղասպանության զոհերի հիշատակը: Այս անգամ էլ ապրիլի 24-ի առավոտյան մրցումների մասնակիցներն «Օլիմպիա» հյուրանոցից կուղեւորվեն Ծիծեռնակաբերդ, որից հետո կվերադառնան «Դինամո» մարզասրահ ու կանցկացնեն եզրափակիչ մենամարտերը:

Մրցումների բացման հանդիսավոր արարողությունը տեղի կունենա այսօր ժամը 12-ին: Մրցումները կանցկացվեն տարիքային 4 խմբով, 11 քաշային կարգում: Մեդալների 44 հավաքածու կխաղարկվի սանդա ուշու մրցաձեւում, 20 հավաքածու՝ վարժահամալիրային ուշուից: Մեդալների համար կպայքարեն Հայաստանի, Ռուսաստանի, Ղազախստանի, Իրանի եւ Իրաքի ընդհանուր առմամբ 162 մարզիկներ: Ընդհանուր առմամբ նախորդ 6 մրցաշարերում հանդես են եկել 17 երկրների ներկայացուցիչներ: Տարեցտարի մասնակիցների թիվն աճում է: Օրինակ, առաջին մրցաշարում արտերկրից ընդամենը մեկ մարզիկ էր մասնակցում:

Մրցաշարի կազմակերպչական ծախսերը հոգացել է ուշուի Հայաստանի ֆեդերացիան՝ բյուջեով իրեն հատկացված միջոցներով: Իսկ մյուս երկրների մարզիկների ճանապարհածախսը, գիշերելու եւ սնվելու վարձը հոգում են այդ պատվիրակությունները: Նշենք, որ «Դինամո» մարզասրահ մուտքն ազատ է:

Ղազախստանի ուշուի հավաքականի գլխավոր մարզիչ **Ալեքսանդր Ռադունցեւը** նշեց, որ ինքն առաջին անգամ է Հայաստանում ու հիացած է թե Երեւանով, թե հայերի բարյացկամությամբ: Նա իր գոհունակությունը հայտնեց ուշուի Հայաստանի ֆեդերացիայի ղեկավարությունից, որն արդեն 7-րդ տարին Երեւանում միջազգային մրցաշար է անցկացնում, ինչը նպաստում է մարզաձեւի մասսայականացմանն ու զարգացմանը: Ռադունցեւը նաեւ համոզմունք հայտնեց, որ մրցաշարը կանցկացվի բարձր մակարդակով, մրցավարներն էլ ամեն ջանք կգործադրեն ազնիվ մրցապայքար ապահովելու համար:

Իսկ ահա իրանցի **Մեհդի Անայմգռին** 2-րդ անգամ է այցելում Հայաստան: Նա նշեց, որ նախորդ այցի համեմատ դական փոփոխություններ է տեսնում Հայաստանում: Մեհդին բազմիցս առիթ է ունեցել շփվելու հայ ուշուիստների հետ, որոնց վարպետությունն ըստ նրա տարեցտարի աճում է: Դրանում մեծ է մարզաձեւի ֆեդերացիայի նախագահի ներդրումը: Իրանցի մասնագետը հույս հայտնեց, որ մի գեղեցիկ օր ուշուն կընդգրկվի օլիմպիական մարզաձեւերի շարքում:

Տիգրան Չոբանյանը տեղեկացրեց, որ հայ ուշուիստները 1997-ից են մասնակցում միջազգային մրցաշարերի: Առաջին հաջողությունը 2000-ի Եվրոպայի առաջնությունում էր, որում հայ մարզիկները մեդալներ նվաճեցին: 2001-ին Երեւանում անցկացվեց ուշուի աշխարհի 6-րդ առաջնությունը, որը մեծ խթան էր մարզաձեւը հանրաքեսությունում մասսայականացնելու եւ ավելի զարգացնելու համար:

Երեւան ժամանած թիմերի կազմերում մեծ թիվ են կազմում տիպոսակիր մարզիկները: Ընդհանրապես երեւանյան մրցաշարը դասվում է ուժեղագույնների՝ A կարգի մրցաշարերի շարքին: Ֆեդերացիայի նախագահը հույս հայտնեց, որ հայ մարզիկները հաջող ելույթներ կունենան նաեւ երեւանյան մրցաշարում, որը նրանց համար ուժերի հիանալի ստուգաստես կլինի հոկտեմբերին Թուրքիայում կայանալիք ուշուի աշխարհի առաջնությունից առաջ: Ի դեպ, նախորդ տարի Թուրքիայում կայացած Եվրոպայի առաջնությունում մեր մարզիկները նվաճել են 2 ոսկե եւ 10 բրոնզե մեդալ: Ի դեպ, Թուրքիայի մարզիկներին եւս հրավեր էր ուղարկվել մասնակցելու երեւանյան մրցաշարին, սակայն հերթական անգամ այդ երկրի ֆեդերացիան հրաժարվել էր մասնակցությունից:

Բլոխինը գլխավորեց Ուկրաինայի հավաքականը

Օլեգ Բլոխինը նշանակվել է Ուկրաինայի ֆուտբոլի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ: Այդ պաշտոնի համար Ուկրաինայի ֆուտբոլի ֆեդերացիան 3 թեկնածու ուներ: Բացի Բլոխինից, գլխավոր մարզչի պաշտոնին հավակնում էին հավաքականի ներկայիս մարզիչ Յուրի Կալիտվինցեւը եւ երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ Պավել Յակովենկոն:

Ֆեդերացիայի գործկոմի նիստի ընթացքում Յակովենկոն հանեց իր թեկնածությունը, պատճառաբանելով, որ ներկայումս գլխավոր խնդիրը երիտասարդական հավաքականին Եվրոպայի առաջնությանը նախապատրաստելն է: Գործկոմի անդամները նախապատվությունը տվեցին Բլոխինին:

«Իմ վրա կրկնակի պատասխանատվություն է ընկնում: Առաջինն Ուկրաինայի հավաքականի վարկն է, երկրորդը՝ Եվրոպայի առաջնությունն անցկացվելու է Ուկրաինայում, ուստի հարկավոր է հաջող հանդես գալ: Ֆուտբոլիստները պետք է գիտակցեն, որ յուրաքանչյուր խաղում հարկավոր է աղացուցել հավաքականում խաղալու արժանի լինելը: Հավաքականի առջեւ խնդիր է դրվել նվաճել Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Նպատակին հասնելու առաջին քայլը պետք է լինի հաջորդ փուլ մտնելը», նշել է Բլոխինը գլխավոր մարզչի պաշտոնում ընտրվելուց հետո:

Օլեգ Բլոխինը մարզական իր կարիերան սկսել է Հունաստանում, որտեղ մարզել է ՊԱՕԿ-ը, ԱԵԿ-ը եւ «Իոնիկոսը»: Բլոխինն Ուկրաինայի հավաքականում աշխատել է 2003-2007-ին: 2004-ի Եվրոպայի առաջնության ուղեգիր նվաճել չհաջողվեց, իսկ 2006-ի աշխարհի առաջնությունում հավաքականը Բլոխինի գլխավորությամբ հասավ մինչեւ քառորդ եզրափակիչ:

2008-ին Բլոխինը գլխավորեց «Մոսկվան», որը Եվրոգավաթների մրցաշարի ուղեգիր չնվաճեց, ՌԴ առաջնությունում էլ գրավեց 9-րդ տեղը: 2009-2010-ին նա Օդեսայի «Չեռնոմորեցի» մարզական տնօրենն էր:

Բլոխինի ֆուտբոլիստի կարիերան ավելի հարուստ է: Կիեւի «Դինամոյի» կազմում նա 7 անգամ նվաճել է երկրի չեմպիոնի տիտղոսը, 2 անգամ դարձել է գավաթակիրների գավաթակիր, արժանացել է Սուպերգավաթին: 1975-ին ճանաչվել է Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստ՝ արժանանալով «Ոսկե գնդակին»:

«Բանանցի» մարզադաշտը կգործի մայիսից

Այսօր կայանալիք «Բանանց»-«Շիրակ» հանդիպումը կկայանա «Հանրապետական» մարզադաշտում, քանի որ «Բանանցի» խաղադաշտը դեռեւս լիովին պատրաստ չէ: Ներկայումս մարզադաշտում տրիբունայի ծածկի տեղադրման աշխատանքներ են ընթանում: Ինչպես տեղեկացանք ակումբից, «Բանանցը» սեփական մարզադաշտում մրցակիցներին կհյուրընկալի մայիսից: 6-րդ տուրի կենտրոնական հանդիպումը կկայանա «Միկա» մարզադաշտում, որտեղ դաշտի տերերը կհյուրընկալեն առաջատար «Ուլիսին»: «Հրազդանում» արարատցիները կմրցեն «Փյունիկի» հետ, իսկ Իջեւանում «Իմպուլսը» ուժերը կչափի «Գանձասարի» հետ:

ԲՈՆՅՔԱՄԱՐՏ

Դարչինյանը խոստացել է նոկաուտով հաղթել Պերեսին

Վաղն առավոտյան Լոս Անջելեսում կկայանա թեթեւագույն քաշային կարգի 4 ուժեղագույն բոնցֆամարտիկների մրցաշարի 3-րդ տեղի համար մենամարտը Վախթանգ Դարչինյանի եւ Յոնի Պերեսի միջեւ: Այդ մենամարտում կխաղարկվի նաեւ IBO-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Այդ երեկոյի ընթացքում Աբներ Մարեսի եւ Ժոզեֆ Ագբեկոյի միջեւ կայանալիք մենամարտում պետք է որոշվեր մրցաշարի հաղթողը: Սակայն Ագբեկոյի հիվանդության պատճառով այդ մենամարտը հետաձգվել է: Այնպես որ Դարչինյանի եւ Պերեսի մրցավեճը բոնցֆամարտի երեկոյի գլխավոր մենամարտն է:

Հիշեցնենք, որ մրցաշարի առաջին մենամարտում Դարչինյանը պարտվել էր Ժոզեֆ Ագբեկոյին միավորներով: Դարչինյանի ներկայացուցիչները պաշտոնապես բողոքարկել էին մենամարտի արդյունքը: Թեեւ այն չեղյալ չէր համարվել, սակայն Դարչինյանին էր վերադարձվել IBF-ի վարկածով չեմպիոնական գոտին: Բացի այդ, հայ բոնցֆամարտիկին իրավունք էր վերապահվել ռեւանշ-մենամարտ անցկացնել Ագբեկոյի հետ: Իհարկե, դա այն դեպքում, եթե Վախթանգը հաղթի Պերեսին: Ահա թե ինչու առաջիկա մենամարտը շատ կարեւոր է Վախթանգի համար, որը խոստացել է նոկաուտով հաղթել մրցակցին, մանավանդ որ մենամարտը կայանալու է Երեւանի ժամանակով ապրիլի 24-ի վաղ առավոտյան:

Դարչինյանի համար այս մենամարտը կլինի 40-րդը պրոֆեսիոնալ ռինգում: Նա տոնել է 35 հաղթանակ, 3-ում պարտվել է, մեկն ավարտվել է ոչ-ոքի: Կոլումբիացի Յոնի Պերեսը 32 տարեկան է, 3 տարով փոքր է Դարչինյանից: Նա պրոֆեսիոնալ ռինգում 22 մենամարտերից 20-ում է հաղթել, կրել է մեկ պարտություն, մեկ հանդիպում էլ ավարտել է ոչ-ոքի:

Տաթեւ Աբրահամյանը կարունակի պայքարը

Շախմատի ԱՄՆ-ի առաջնությունում ավարտվեց նախնական փուլը: Կանանց մրցաշարում կիսաեզրափակիչի ուղեգիր նվաճեց Տաթեւ Աբրահամյանը, որը կարունակի պայքարը մեդալների համար: Ավարտական տուրում նրան բավարարում էր ոչ-ոքին, ուստի հաշտություն կնքեց Իրինա Զենյուկի հետ: Մելեխինա-Գոլեթիանի, Բագինսկայտե-Կրուզ պարտիաներն էլ խաղաղ ելք ունեցան:

Վճռորոշ նշանակություն ուներ Աննա Զատոնսկիխի եւ Սաբինա Ֆոյշորի մրցավեճը: Զատոնսկիխին հաջողվեց չափազանց կարեւոր հաղթանակ տոնել ու վաստակելով 4 միավոր, հավասարվել Ֆոյշորին: Այժմ 4-րդ ուղեգրի համար պայքարում Զատոնսկիխը պետք է լրացուցիչ մրցախաղ անցկացնի Ֆոյշորի հետ:

Կանանց մրցաշարի նախնական փուլի հաղթող դարձավ Իրինա Կրուզը՝ վաստակելով 5,5 միավոր: 2-րդ եւ 3-րդ տեղերը 4,5-ական միավորով զբաղեցրին Քամիլա Բագինսկայտեն եւ Տաթեւ Աբրահամյանը: Այս եռյակը կշարունակի պայքարը չեմպիոնի տիտղոսի համար:

Տղամարդկանց պայքարում Վարուժան Հակոբյանը վերջին տուրում ոչ-ոքի խաղաց Յան Էլվեսի հետ ու 3 միավորով գրավեց 5-րդ տեղը: 1-ին ենթախմբից ուղեգիր նվաճեցին Գասա Կամսկին եւ Յուրի Շուլմանը, որոնց մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի: Կամսկին վաստակեց 5 միավոր, Շուլմանը՝ 4,5:

2-րդ ենթախմբում առայժմ հայտնի է կիսաեզրափակիչի միայն մեկ մասնակիցը: Դա Ռոբերտ Հեսն է, որը ոչ-ոքի խաղալով Յասեր Սեյրավանի հետ, վաստակեց 5,5 միավոր: Իսկ ահա 4-ական միավոր վաստակած Ալեքսանդր Օնիշչուկն ու Սեմ Շենկլենդը լրացուցիչ մրցախաղում կվիճարկեն 2-րդ ուղեգիրը: Ավարտական տուրում նրանց մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի:

Առայժմ առանց մեդալների

Սամբուլում մեկնարկել է ձյուդոյի Եվրոպայի առաջնությունը, որի պարգեւներն են վիճարկում 45 երկրների 426 ձյուդոյիստներ: Մրցաշարը ձյուդոյիստներին նաեւ վարկանիշային միավորներ կպարգեւի Լոնդոնի ամառային օլիմպիադայի ուղեգրերի համար մղվող պայքարում:

Հայաստանը Եվրոպայի առաջնությունում ներկայացնում են 6 ձյուդոյիստներ: Նրանցից 4-ը տատամի դուրս եկան մրցումների առաջին օրը: Մեդալների ակնկալիքներ կային Հովհաննես Դավթյանից (60 կգ) եւ Արմեն Նազարյանից (66 կգ), սակայն սպասելիքները չարդարացան:

Հովհաննես Դավթյանն առաջին գոտեմարտում հաղթելով Սլովենիայի ներկայացուցիչ Մաթիաս Տրբովիչին, հաջորդ փուլում պարտվեց վրացի Բեթկիլ Շուկվանիին եւ զրկվեց մեդալի համար պայքարելու հնարավորությունից: Փոխարենը հաջող էր Ռուսաստանը ներկայացնող Արսեն Գալստյանի ելույթը, որն արժանացավ բրոնզե մեդալի: Նա հաջորդաբար պայքարից դուրս մղեց թուրք Ահմեդ Կաբային, շվեդ Օլե Սունդստրյոմին, իտալացի Էլիո Վերդեին: Կիսաեզրափակիչում Արսենը հանդիպեց Հովհաննես Դավթյանին հաղթած Բեթկիլ Շուկվանիի հետ: Ցավոք, Արսենին էլ չհաջողվեց հաղթել Շուկվանիին, որը մտնելով եզրափակիչ, Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը զիջեց իր հայրենակից, Ուկրաինան ներկայացնող Գեորգի Զանտարաիային: Բրոնզե մեդալի համար պայքարում Գալստյանը հաղթեց Վրաստանի մեկ այլ ներկայացուցչի՝ Ամիրան Պատիինաշվիլուն ու դարձավ 3-րդ մրցանակակիր:

Անհաջող հանդես եկավ 2005-ի Եվրոպայի չեմպիոն Արմեն Նազարյանը: Նա եւս պայքարից դուրս մնաց 2-րդ փուլում: Հաղթելով բելառուս Դմիտրի Շերշանին, Արմենը պարտվեց ուկրաինացի Սերգեյ Պլիեւին: Քաշային նույն կարգում Հայաստանի 2-րդ պատվիրակ Համբարձում Տոնոյանը պայքարից դուրս մնաց հենց առաջին փուլում՝ զիջելով լատվիացի Դենիս Կոզլովին: Մինչեւ 66 կգ քաշային կարգում հաղթող ճանաչվեց հունգարացի Միկլոշ Ունգվարին, որը եզրափակիչում պարտության մատնեց ադրբեջանցի Թարիան Կարիմովին: Բրոնզե մրցանակակիր դարձավ բրիտանացի Քոլին Քաստեսը:

Աղջիկների մինչեւ 48 կգ քաշային կարգում Գայանե Հարությունյանը հաղթանակով սկսեց մրցաշարը՝ պարտության մատնելով բելգիացի Ջարլինե վան Սնիկին: Սակայն հաջորդ փուլում նա պարտվեց գերմանացի Սեւերինե Պեչին:

Էջը պատրաստեց **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

Օրվա հետքերով

ԱՄՆ-ի առաջին «հարվածը» Բաֆվին

Երեկվա համարում «**Ազգը**» անդրադարձավ Բաֆվում ԱՄՆ դեսպան Մեթյու Բրայզայի Նախիջևան կատարած այցին: Բրայզան նշել էր, որ «հաջորդ այցի ժամանակ ինքը անպայման պետք է այցելի Զուղա՝ տեսնելու այնտեղ խաչքարերի վիճակը»: Մենք տեղեկացրինք նաև, որ Բրայզային ընդունել է Նախիջևանի խորհրդարանի ղեկավար Վասիֆ Թալիբովը: Այս հանդիպման որոշ մանրամասնություններ պարզ են դարձել ադրբեջանական pia.az կայքին, որը տեղեկացնում է, թե Թալիբովը երկու ժամ սպասեցրել է Բրայզային, «եւ առհասարակ Նախիջևանում Բրայզան արժանացել է տեղի իշխանությունների գռեհիկ ընդունելությանը»: Բացի այս մանրամասնություններից՝ երեկ հայտնի դարձավ նաեւ, որ Բրայզան Զուղա այցելելու ցանկություն հայտնել է հենց այս այցի ընթացքում, սակայն նրան դա մերժվել է: Այսպես, արդեն երբ դեսպանը վերադարձավ Բաքու, Ադրբեջանում ամերիկյան դեսպանատունը հայտարարություն տարածեց. «Նախիջեւան կատարած այցի ընթացքում դեսպան Մեթյու Բրայզան ցանկություն է հայտնել Զուղա մեկնելու, որպեսզի ուսումնասիրի այն գերեզմանատունը, որտեղ գտնվում են հայկական խաչքարեր, որոնք, որոշ տեղեկությունների համաձայն, 2005-ին ոչնչացվել էին: Դեսպանի խնդրանքը, սակայն, մերժվել է», նշված է ամերիկյան դեսպանատան հայտարարությունում: Առաջին անգամ թերեւս ԱՄՆ-ը պաշտոնապես Նախիջեւանում «ճանաչեց հայկական խաչքարեր», առաջին անգամ ընդունեց փաստը, որը «դրանք, ըստ որոշ տեղեկությունների ոչնչացվել են», եւ առաջին անգամ Բաֆվի հետ խոսեց «հայկական շեշտադրություններով»: Ի դեպ, նույն pia.az կայքի՝ «իշխանության մոտ կանգնած» աղբյուրը հաստատել է, որ Նախիջեւանում արեւմտյան դիվանագետներին նման ընդունելություն ցույց տալը հրահանգվում է անմիջապես Բաֆվից, քանի որ «ադրբեջանական իշխանությունը դրանով հասկացնում է, որ ինքը դժգոհ է Արեւմուտքի որոշ ուժերի եւ ադրբեջանական ընդդիմության պարբերական հանդիպումներից: Այս վերջինն, ի դեպ, հաշվի առնելով արաբական աշխարհի ընթացիկ իրադարձությունները, ինչպես նաեւ Իլհամ Ալիեւի «ժառանգած աթոռը», ինչի մասին բացեիբաց խոսում է անգամ Euronews-ը, պետք է նկատել, որ բոլորովին այլ վսանգներ են խոսանում Նախիջեւանից եկած Ալիեւներին:

Հ. Ա.

«Sukhoi siperjet 100»-ը թռավ

Հայաստանի ազգային փոխադրող «Արմավիա» ընկերության ներկայացրած «Յուրի Գագարինի» անունը կրող «Sukhoi siperjet 100» մակնիշի նոր արտադրության ինքնաթիռն իր առաջին թռիչքը կատարեց Մոսկվա: Մինչ այդ ինքնաթիռը կարճատեւ տեխնիկական թռիչք էր կատարել Թբիլիսի. ինքնաթիռի առաջին ուղեւորը «Արմավիա» ավիաընկերության սեփականատեր Միխայիլ Բաղդասարովն էր:

Աշխարհում առաջին «Sukhoi superjet 100» ինքնաթիռը թողարկվել է 2007-ին. այս տարի Միջազգային ավիացիոն կոմիտեն հավաստագրել է այն: «Արմավիա» ավիաընկերության գլխավոր տնօրեն **Նորայր Բելլույանի** տեղեկացմամբ՝ երկրորդ «Sukhoi superjet 100»-ը Հայաստան կբերվի այս տարվա հունիսին, իսկ մեկ տարի անց՝ երրորդը:

«Ինքնաթիռի տեխնիկական վիճակը բարձր մակարդակի վրա է», հավաստիացրեց Բելլույանը՝ հավաստիացնելով, որ «Sukhoi» արտադրության ինքնաթիռները դեռ կնվաճեն աշխարհը:

Անձնակազմի 12 անդամ է վերապատրաստվել «Sukhoi superjet 100»-ը գործարկելու համար: Այն իր հզորությամբ գերազանցում է «Էյրբաս»-ին եւ «Բոինգ»-ին, սակայն ավելի փոքր վառելիք է ծախսում: Վառելիքի փոքր ծախսի պայմաններում հնարավոր կլինի ինքնաթիռի ուղեւորների համար տոմսերի գները զեղչել 15 տոկոսով:

«Արմավիայի» սեփականատեր Միխայիլ Բաղդասարովի խոսքերով՝ ընկերությունը շարունակելու է նոր ինքնաթիռներ ձեռք բերելու եւ նոր ուղղություններով չվերթեր իրականացնելու քաղաքականությունը:

Հ. Հ.

Հովիկ Աբրահամյանը պատասխանել է Տիգրան Սարգսյանին Facebook-ի իր էջում

ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը վարչապետ Տիգրան Սարգսյանի՝ կառավարության նիստում հնչեցրած քննադատություններին պատասխանել է Facebook սոցիալական կայքում: «Նախ ասեմ, որ Ազգային ժողովում հնչեցրած իմ տեսակետը ոչ թե քննադատություն էր, այլ եզրահանգում, որը հիմնված էր ՏԻՄ-երում աշխատելու եւ կառավարությունում այդ ոլորտը համակարգելու տարիների իմ փորձի վրա:

Ինչ վերաբերում է կառավարության նիստում վարչապետի հայտարարությանը, կրկնեմ իմ այն տեսակետը, որ միշտ կողմնակից եմ եղել լիազորությունների ապակենտրոնացմանը դեպի ՏԻՄ-եր... Մենք վարչապետի հետ նույն քաղաքական թիմից ենք, անում ենք նույն գործը՝ պարզապես տարբեր տեսանկյուններից մոտենալով դրան, բայց ունենալով նույն նպատակը՝ զարգացած տեսնել ՏԻՄ համակարգը: Եվ միմյանցից նեղանալու բան չունենք, եթե միայն պարոն Սարգսյանն ինձանից չի նեղացել իր վերջին առաջարկը մերժելու համար: Սա, իհարկե, իբրեւ կատակ»:

Տիգրան Սարգսյանը վերջին կառավարության նիստին, գյուղատնտեսության ոլորտին վերաբերող խորհրդարանական լսումներում ԱԺ նախագահի քննադատությանն արձագանքելով՝ ասել էր, թե կառավարությունը չի փորձում լիազորությունները կենտրոնացնել իր ձեռքում. հակառակը՝ վերջին երեք տարիների օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաեւ կառավարության որոշումները հստակ ցույց են տալիս, որ «մենք էապես ընդլայնում ենք տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, ավելին, վերացնում ենք այն խոչընդոտները, որոնք առկա են, վերացնում ենք պետական կառույցների միջամտությունը՝ եթե կան գործառույթներ, որ ՏԻՄ-երը կարող են ինքնուրույնաբար իրականացնել»:

Մ. Խ.

Օգնության խնդրանք

Սոֆիսակի երկրաշարժն ինձանից խլեց հարազատներիս, հայրական տունս, մայրս զրկվեց ոտքից: Ճիշտ է՝ ես այդ ժամանակ դեռ ծնված չէի, բայց մորս պատմած անցյալն ու դառը ներկան համեմատելով՝ երդվեցի ոտքի կանգնեցնել իմ ընտանիքն ու լինել նրա աղավնը:

Այժմ ես 17 տարեկան եմ: Բնակվում եմ Գյումրիում, սովորում եմ Երեւանի ավիացիոն վարչության առընթեր ավիաուսումնական կենտրոնի երկրորդ կուրսում: Ապագա ավիակարգավար եմ: Ապրում եմ երկրորդ կարգի հաշմանդամ մորս եւ անչափահաս քրոջս հետ: Հայրս անհայտ բացակայող է: Ուսման վճարը կազմում է 200.000 դրամ, որը չվճարելու դեպքում սփիռված կլինեմ դադարեցնել ուսումս, չնայած պաշտում եմ ապագա մասնագիտությունս: Գիտակցում եմ նման մասնագիտության պատասխանատվությունը. չէ՞ որ գեթ մեկ սխալ բառը կարող է մարդկային կյանք արժենալ:

Քաջ գիտակցելով, որ ընտանիքիս միակ հույսն ու ապագա կերակրողը ես եմ, օգնության խնդրանքով դիմում եմ իմ հայրենակիցներին, որոնք, հուսով եմ, անտարբեր չեն գտնվի մի պատանու հանդեպ, ով ընդամենը ուզում է ապրել, պահել իր ընտանիքն ու ծառայել հայրենիքին:

Կխնդրեի ինձ գրել հետեւյալ հասցեով՝ sergey.mnacakanyan@mail.ru

ՍԵՐԳԵՅ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Հեռախոս՝ 055-666-109

Ապրիլի 22-ը՝ Երկրի միջազգային օր

Ապրիլի 22-ը հռչակված է որպես Երկրի օր: Միջազգային հանրությունն արդեն 41-րդ անգամ նշում է այս օրը բնապահպանական լայնամասշտաբ քարոզարշավներով: 2011-ը Միացյալ ազգերի կազմակերպությունը հռչակել է Անտառների տարի, եւ նախատեսված «Միլիոն ծառ» նախագիծը կիրականացնի ծառատունկեր աշխարհի տարբեր երկրներում: 2012-ի ՄԱԿ-ի Կայուն զարգացման կոնֆերանսին ընդառաջ «Երկրի օր» համաշխարհային ցանցը նպատակադրվել է իրականացնել բնապահպանական 1 մլրդ միջոցառում. դրանց մի զգալի մաս արվեստագետների մասնակցությամբ. կլինեն լուսարձակային եւ ցուցահանդեսային մրցույթներ:

Արդեն 2 տարի է Երկրի օրվա միջազգային քարոզչության մասնակիցների մեջ է նաեւ Հայաստանը՝ Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի բազմաբնույթ ծրագրերով: Այս մասին էր երեկ Մոսկվայի տանը կայացած հիմնադրամի տնօրեն Ռուբեն Խաչատրյանի եւ «Վիվասել-ՄՏՍ»-ի տնօրեն Ռալֆ Յիրիկյանի ասուլիսը:

Երեկ մեկնարկեց առաջին միջոցառումը՝ «Իմ անտառը» լուսանկարչական մրցույթը: Ապրիլի 27-ին, ինչպես անցած տարի, կիրականացվի ծաղկահավաք: Հավաքածը կծառայի որպես հումք պարարտանյութի պատրաստման եւ թղթի վերամշակման համար: Այս ընթացքում Երեւանում եւ մարզերում բազմաթիվ ծառատունկեր կլինեն, ամենախոշորը՝ Եռաբլուրում, մայիսի 8-ին, Շուշիի ազատագրման 19-ամյակի օրը՝ նվիրված զոհված հայորդիների հիշատակին եւ կտնկվի 500 ծառ:

Երեկ, Մոսկվայի տան մամուլի ասուլիսին հաջորդեց «95 ծառ»՝ 30 որպես տեւողությամբ վավերագրական ֆիլմի (ռեժիսոր՝ Միխայել Դովլաթյան) առաջին ցուցադրությունը: Սա մի պատմություն է հիմնադրամի 2 անդամների՝ Սերգեյ Զաքարյանի եւ Զոհրաբ Քարամյանի Թուրքիա կատարած ուղեւորության, այնտեղից 95 տնկի Հայաստան տեղափոխելու եւ հատկապես Վրաստանի մասային ծառայությունների հարուցած խոչընդոտների ու քաշքշուկների մասին: Այդ 95 ծառերը, որ տնկվեցին անցած տարի Ծիծեռնակաբերդի հիշողության պուրակում, Հայոց մեղ եղեռնի զոհերի հիշատակի խորհրդանիշներ դարձան:

Մ. Ք.

Ի գիտություն հասարակության

«Քարեվարդ» ՍՊԸ-ն դիմել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ՀՀ Տավուշի մարզի Ենոքավան գյուղից վերեւ Պաղջուր գետի վրա «Խաչաղբյուր-2» ՓՀԷԿ-ի կառուցման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար:

Շիրակի մարզ, ք. Արթիկ, Տուֆագործների 1, հեռ.՝ 077-223-994:

ՀԱԿԻՐՔ

Նոր մահ բանակում

Ապրիլի 21-ին, ժամը 22:50-ի սահմաններում ՀՀ ՊՆ N զորամասում իրեն ամրակցված ինքնաձիգից հրազենային վնասվածք է ստացել շարքային զինծառայող Արթուր Գեղամի Ղազարյանը: Նա զինվորական կենտրոնական հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին մահացել է: ՀՀ ՊՆ քննչական ծառայությունը դեպքն արդեն որակել է որպես ինքնասպանություն: Արթուր Ղազարյանը բանակ էր զորակոչվել 2010 թ. աշնանը՝ Հրազդանի զինկոմիսարիատից: Հարուցվել է քրեական գործ: Ըստ զինվորի հոր խոսքի՝ Արթուրի հետ նա հեռախոսազրույց է ունեցել ապրիլի 21-ից մեկերկու օր առաջ, նա դժգոհություն չի հայտնել եւ պատրաստվում էր այս կիրակի տուն գալ: Հոր ասելով՝ ծառայության հետ կապված խնդիրներ զինվորը չի ունեցել, իսկ նրա ձեռքին գրիչով գրված է եղել. «Ես մեղավոր չեմ, ոչ ոք մեղավոր չէ»:

Ազգային անվտանգության խորհրդի նիստ

ՀՀ նախագահ, Ազգային անվտանգության խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը երեկ հրավիրել էր Ազգային անվտանգության խորհրդի նիստ:

Ինչպես տեղեկացնում են ՀՀ նախագահի մամլո գրասենյակից, մինչ նիստի օրակարգին անցնելը, Հանրապետության ղեկավարը խորհրդի անդամների անունից նախ շնորհավորել է Ազգային ժողովի «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանին՝ Ազգային անվտանգության խորհրդի անդամ նշանակվելու կապակցությամբ եւ մաղթել արգասաբեր աշխատանք: Նիստում քննարկվել են Հայաստանի պարենային անվտանգության ապահովման հայեցակարգի եւ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի նախագծերը, մախային եւ հարկային բարեփոխումների 2011-2013 թթ. ծրագրերը:

Հ. Ա.

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Արարատի մարզի Նորամարգի գյուղատնտեսարանի ոռոգման նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 38,0 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ., մայիսի 2-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրության՝ 22.4.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: